



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ

Ե. ՏԱՐԻ

1903 ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻԻ 11

ԲԱՐԷՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն թառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեալեան խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : ԵՍէ հոգին չծարգմանը, չլուսարեղի ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութեանը չեղածի պէս պիտի ըլլար :

Ճ. ՄԻՇԼԷ

MARIE SEVADJIAN



NOUVELLES

— 6 —

Traduites de l'arménien moderne par
FRÉDÉRIC MACLER

Գրքի ուղղակիքը պէտք է գիտնեն հետեւեալ
հասցէին :

Société Nouvelle de Librairie et d'Édition,
Paris, 17 rue Cujas.

Գին 2 Ֆ. 50

La Nouvelle Sodome

—
PAR

EDMOND FAZY

Գրքի փափժըղները պէտք է գիտնեն :

Edition Moderne
Ambert et Cie.

25, rue Lariston

Գին 3 Ֆ. 50

ՏՊԱՐԱՆ „ԱՆԱՀԻՏ“

22 RUE CLAUZEL, PARIS

Կը տպագրուին, խնամքով եւ մատչելի գներով, հայերէն ու ֆրանսերէն զրքեր . զրքույկներ, գեղարուեստական հրատարակութիւններ, յայտագրեր, հրաւիրագրեր, այցաքարտեր, ծանուցումներ, եւն, եւն :

«ՏՊԱՐԱՆ ԼՆԵԼԻՏ» պիտի շարունակէ «Մատենադարան Անահիտ»ի շարքը, պիտի սկսէ «գեղարուեստական հրատարակութեան» նոր շարք մ եւ պիտի շարունակէ նմանապէս «Անահիտի հրատարակութիւններ»ը, որոնց առաջինը «Նահապետ Գուշակի Իրան»ը, մեծ համակրութեամբ ընդունուեցաւ հայ հասարակութեան :

«Անահիտի հրատարակութեան» ամենէն մտասկայ թիւերը պիտի ըլլան՝

1. ԷՕՄԷՐ ԽՍՅԵԱՄԻ ՔՕՌԵԱԿՆԵՐԸ, թարգմանութիւն Գ. ՓՍՌԻԱԿԻ
2. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՍԻՆԵՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՌԸՐԸ, ուսումնասիրութիւն ԱՐՇԱԿ ԶՊԱՆՆԵԱՆԻ
3. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՍԻՆԵՆԻ ՔԵՐԹՈՒՄԵՆՐՆ ՈՒ ՃԱՌԵՐԸ, (Բ. տպագրութիւն)
4. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՍԻՆԵՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒԵԻԻՆԵՐԸ, (Բ. տպագրութիւն) :

Բացուած է բաժանորդագրութիւն Պեշիկսինեանի կենսագրութիւնն եւ քերթուածներն ու ճառերը պարունակող երկու հատորներուն համար . երկու հատորը պիտի արժեն բաժանորդագրուողներուն համար՝ հինգ ֆրանք, իսկ տպագրութեանն յետոյ՝ վեց ֆրանք : Բաժանորդագրուելի ցանկացողներէն կը խնդրենք այժմէն զրկել նշանակուած դումարը (5 ֆրանք), որպէս զի ըստ այնմ որոշենք տպագրութեան օրինակներու թիւը :

Կը խնդրուի «Տպարան Անահիտ»ի գործառնութեանց վերաբերեալ ամէն նամակ զրկել տպարանի հասցէին, իսկ «Անահիտ» ամսաթիւերին, «Հրատարակութիւնք Անահիտ»ին եւ եւ «Մատենադարան Անահիտ»ին վերաբերեալ ամէն նամակ զրկել խմբագրութեան մշտական հասցէին :

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Ե. Ա. Ի.

1903 ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻ 11

ՔՐՈՒԹԻՒՆ ՍՎԱՃԵԱՆ

(Շար.)

Սվաճեանի «Հայաստան Մայր»ը տեսակ մը «Արաքսի արատուք» է, Կամառ Կաթիլայի քերթուածէն առաջ գրուած անկէց շատ վարձեւով, բայց զգացմամբ նոյնքան հղօր եւ յուզի: հոա ալ «Մայր Հայաստան»ը կ'ողբայ իր ցաւը ոչ թէ գեաի մ'երեւոյթին տակ այլ աւերակներէն յառնող ալեւոր մօր մը դէմքով՝ այնպէս ինչպէս ժողովրդական երեւակայութիւնը զայն սիրած է յաճախ պատկերացնել միայն թէ մինչ «Արաքս»ի բերնով խօսող հայրենիքը կը դանգատի արտաքին թշնամիներէ կրուած դժբաղդութիւններէն, Սվաճեանին երազած «Մայր»ը կը դառնանայ մանաւանդ ներքին անեղ թշնամիին՝ եղբայրասպան պառակտումին՝ գործած աւերը յիշելով:

Կտորը կը սկսի սապէս.

« Արեւը շատ համարեց ինձի, նախանձելով իմ երջանկութեանս վրայ, մէկ քանի ժամ Անիի լուռ եւ տխուր աւերակները, իմ նախնաց տուները, պալատները եւ եկեղեցիները իրենէն զատ առանց ուրիշ նախանձոտ աչքի գիտելս, ու յանկարծ գնաց պահուրտեցաւ Ախուրեան գէտին միւս կողմը դաշտին մէջ

թաղվելով: Փուճ տեղը խարխափելով փնտռեցի, հետեւեալ օրն ալ այն աւերակներուն առանձին բուն ըլլալու փափաքով գիշերը անցընելու ապահով տեղ մը: Բայց յետոյ մտածելով թէ իմ նախնաց հանգստարանին մէջ եմ, անվախութիւն մը եկաւ վրաս, ու հոն՝ եղած տեղս, որ հին ատենէն մնացած հրապարակ մ'ըլլալու էր, մարգին վրայ նստայ, եւ այս քաղաքամօր նախնի շքեղութեան ու բազմամարդութեան եւ արդի թշուառութեան ու ամայութեան վրայ տխուր մտածութիւններով պաշարուեցայ: Գիշերին աստղը իր փայլուն ճառագայթներովը սոսկալի խաւարը փարատեց ու իմ նախնաց քաղցը յիշատակները աւելի սիրուն երեւցուց ինձի, եկեղեցեաց անսուտ նշան՝ գմբէթաց քառաթեւ խաչերն սկսան փայլել, որոնք ատեն մը աշխարհիս չորս կողմէն բարեպաշտները ընդունելու համար կանգնած էին:

« Հագիւ համարձակեցայ ընկողմանած տեղէս ելնելու ու ինէ քիչ մը հետու դիմացի կողմս եղած պալատին մերձենալու, այս վայրերուն անարկու լուծիւնը ընդմիջուեցաւ հառաչանքի մը ձայնով: Այս ձայնը ետեւի կողմէս կուգար. դարձայ եւ ուրուականներու հանդէս մը տեսայ, ինէ քսան քայլ հետու: Սաւաիկ երկիւղով մը բռնուած, երեսիս վրայ գեաիւր ընկայ ու գլուխս քիչ մը վեր բռնած, այս ամայութեան անձանօթ հիւրերը գիտել կ'ուզէի: Այս խումբին առջեւէն կ'երթար սեւազգեստ, բարձրահասակ, կարի սքանչելագեղ կին մը, որուն ղէմքը աւելի փայլուն էր քան լուսինը: Իր բարձր ճակատը իմաստու-

թեանը նշան, ծանր քաղաքը վեհանձնու-
 թեան, այն կուրծքը զթասրտութեան, եւ իր
 շրթանցը ձեւը իր քաղցր բնութիւնը կը
 յայտնէ : Այս կնոջը կը հետեւէին քսանի չափ
 նոսրիչտներ՝ ամենքն ալ զեղեցկութեան ամէն
 ձիրքերով օծտուած : Եյս կինը ո՞վ էր. եւ ո՞վ
 էին իր ետեւէն եկողները. ցնո՞րք մըն էր իմ
 աչքերս պատրող. կենդանի՞ էին ասոնք չէ՞ նէ
 Անուոյ մէջ թաղված մեր թագուհիներէն
 մեկուն եւ իր նոսրիչտներուն ուրուակունն
 էին. չէ՞ նէ առաջինը զիցուէի մըն էր եւ միւս
 ներն ալ յաւերժաճարսունք : կոպայայտու-
 թեան ատեն մեր նախնիքներէն պաշտված :

« Առաջ դող մը եկաւ վրաս ու երկիւղ մը
 մտաւ սիրտս. բայց յետոյ, մտածելով թէ աս
 կինը, ո՞վ ալ ըլլայ, հանդերձ իր խուճորով՝ չի
 կրնար ինծի վնասակար ըլլալ. ա՛յնքան բա-
 րութիւնը իր վրայ կը փայլէր. ուստի ելայ
 պառկած տեղէս ու համարձակեցայ անոր առ-
 ջեւը երթալու եւ ոտքերուն ընկելով իրեն ո՞վ
 ըլլալը ինծի հասկըցընել խնդրելու, միանգա-
 մայն թողութիւն ուղելով իրմէ՛ իր տէրու-
 թեան սահմանները ոտք կոխած ըլլալուս :

« Ազնիւ զաւակս, ըսաւ քաղցր եւ ցաւալի
 » ձայնով մը եւ զիս վեր վերցնելով, ձեղի հա.
 » մար այդչափ խորթացե՞ր եմ ես որ զիս չես
 » կրնար ճանչել. ա՛հ, ի՞նչ թշուառ մար եմ
 » ես որ իմ զաւակներս իս չեն ճանչեր. մոռ-
 » ցեր են իս եւ ուրիշներ, իրենց թշնամութիւն
 » ընտելներ, զիրենք ատող, անգոսնողներ գացեր
 » իրենց մայր են ճանչեր : Այն զաւակներս
 » որ իմ արգանդիս մէջ պահեր, իմ կաթս ա-
 » նոնց ջամբեր, մնուցեր, խնամեր, մեծցուցեր
 » եմ հիմա գնացեր ուրիշ տեղ իրենց մայր
 » գտեր են, չը կրնալով իրենք ալ ինծի հետ
 » վշտանալ ու տառապիլ, Որդեակ, ես ձեր
 » մայրն եմ, ես եմ ձեր ճեր ճշմարիտ մայրը.
 » ես եմ որդեա՛կ, Հայաստան Մայր... »

« Այս խօսքը անանկ բարձր եւ ազդու ձայ-
 նով մը զրուցեց՝ որ աշտարակներուն ու զան-
 զակատուններուն բարձրութիւնքը հնչեցին,
 բոլոր կիսակործան յիշատակները թնդացին,
 հեռուէն Ախուրեանն ալ ասոր ըսածը հաստա-
 տեց. ես ալ չեմտինը գարնուեցայ անոր ոտքե-
 րուն առջեւ, որ բռնեց թեւէս ու վերցուց զիս.
 եւ այնչափ կ'արտասուէր որ իր առջին լիճ
 մը ձեւացաւ իսկոյն : »

« Մայր » կը սկսի թուել իր օրտին բռնոր
 վէրքերը. պատմելէ յետոյ Անիի մեծութիւնն

ու. փառքը, կ'անցնի ցոյց տալու ինչ որ կոր-
 ծանեց այդ մեծութիւնն ու փառքը .

« . . . Ժամտ նախանձը իսկոյն եկաւ ամենուն
 » սրտին մէջ հաստատեց իր աթոռը : Ռամիկը
 » սկսաւ իշխանին բազդին նախանձիլ, իշխանը
 » թագաւորին իշխանութեանը. ամենքն ալ ի-
 » բարու վիճակին : Ծատ չքեց յուրիշ մոլու-
 » թիւններ ալ յաջորդեցին ասոր : Ան ասենք
 » սկսաւ երեւան ելնել ատելութիւն, խոտվու-
 » թիւն, կազ եւ կոխու իմ զաւակներուս մէջ :
 » Իբարու եզրայր ըլլալը մոռնալով, ամենքն ալ
 » սկսան իրարու ռիկերիմ թշնամին բլլալ : Իշ-
 » խանները իրենցմէ վար եղող իրենց եզրայր-
 » ները սկսան ատել, արձամարհել, առ ոտն հ ր-
 » կանել՝ իբր օտար, եւ օտարաց մէջէն իրենց
 » հաւասանը սիրել իբրեւ իրենց ճշմարիտ եղ-
 » բայրը. ու թողուցին անոնց որ իրենց յուն
 » եզրայրներուն զլխուն ամէն չարիք հասցնեն :
 » Պղտիկներն ալ անոնց վարքէն եղծվելով,
 » սկսան իրենք ալ զանոնք ոչինչ համարիլ,
 » անոնց վրայ ունեցած համարումնին վերցընել
 » եւ ալ զանոնք չյարգել ու չսիրել : Ալ ան-
 » կէ կտեւ անոնցմէ օջուտ մը տեսնելու ան-
 » յոյս՝ իրենց օգնութիւնն ալ անոնցմէ ետ
 » զարձուցին, ու սկսան միայն անոնց իշխա-
 » նութեանը ցանկալ. եւ ամէն մարդ իր վի-
 » ճակէն սփռո՛ւ աւելի վիճակ ունեցողին
 » տեղը բռնե ու համար. ամօթալի խաբէու-
 » թիւններու, այգանելի խորամանկութիւն-
 » ներու, անվայել եւ մեղաւոր նենգութիւն-
 » ներու, սոսկալի ոճիրներու եւ արիւ ուռչտե-
 » ղեռնազորութիւններու ձեռնամուխ ըլլալ :
 » Օտարներ Անին գրաւելու եւ իմ զաւակներս
 » գերելու խորհուրդ անգամ զեռ չունեցած,
 » ասոնք սկսան իրենց ձեռքով իրենց քաղա-
 » քը արել կործանել, իրենց հանգստութիւնն
 » ու երջանկութիւնն հալածել. ու իրար գերի
 » ու ստրուկ ընելու աշխատիլ : »

« . . . Չաւակս, աղէկ միտքդ պահէ՛ ինչ որ
 » պատմեցի քեզի քու մեծ եզրայրներուդ վ ա-
 » յօք ու գնա՛ դուն ալ պատմէ ասոնք քու եղ-
 » բարցդ. եւ անցեալէն խրատուած՝ զզոյշ
 » կեցէք այսուհետեւ այն մոլութիւններէն
 » որ զաւակը իր մօրմէն կը զատեն այսպէս .
 » զուք ամենքնիդ եզրայրէք միշտ սիրեցէք
 » իրար ու իրարմէ մի՛ խնայէք ամէն օգնու-
 » թիւն որ կրնաք ընել : Զեր մէջը մեծ պըզ-
 » տիկ ըլլայ, ամենքնիդ հաւասար ըլլաք՝ ըսեմ
 » պիտի նէ ալ, հիմա որ մեծ պղտիկ կայ ձեր
 » մէջը՝ նայեցէք որ մեծերը միշտ իրենցմէ վար

» եզոզները սիրեն , անոնց զգնեն , զանոնք ի-
 » բենց նեղու թիւններէն ազատեն , բրպէս զի
 » անոնց յարգանացը արժանի ըլլան . պըզ-
 » տիկներն ալ միշտ իրենց մեծերուն հնա-
 » զանդ ըլլան ու անոնց աղէկութեանը փա-
 » փաքին եւ պատուոյն նախանձախնդիր ըլլան :
 » Զրուցէ՛ ամէն քու եղբարցդ , որ եթէ իրենց
 » տառապիալ եւ զաւկներէն կարօտ մնացած
 » բարեսիրտ մօրը սիրուն չէ՛ նէ՛ գոնէ Աս-
 » տուծոյ սիրուն . Աղգին փառացը սիրուն , ա-
 » տելու թիւնը . խոտվութիւնը վերցնեն , բարի
 » ըլլան , իրարու սիրելի ըլլան , բարեպաշտ
 » ըլլան նախ իրենց բարւոյն համար , յետոյ՝
 » իմ ցաւիւրս փարատելու . եւ իմ քաջածներս
 » մոռցնելու համար : Թող յիշեն երբեմն երբեմն

« իրինց հոսայտակս անխնամ մնացած մայրն
 » ալ որ զիրենք կը կերակրէր ու կը սնուցա-
 » նէր , եւ գիտցած ըլլան զի անոնց ինծի ը-
 » բածները մոռցած եմ , յուսալով զի ասկէ ե-
 » տեւ ա՛լ ի՛մ սիրտս վշտացնելու բան մը չեն
 » ընէր » . . .

Խեղճ Ավանեան . ի՞նչ պիտի մտածէր , ի՞նչ
 պիտի զգար , եւ ի՞նչ աւելի գտնէր բառեր պի-
 տի գնէր իր «Մայր Հայաստան»ին բերանը ,
 եթէ ապր՛ր ներկայ վայրկեանին , ուր ներքին
 պառակտումը . եզբայրասպան կռիւր առաւել
 քան երբեք մոլեգին ու քստմնելի է դարձած
 Հայոց մէջ :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԷՓՄԼԻ ԽԱՅԵՐՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ

27

Ընկերներ , երբ միարան տօն մը ընէք ,
 Եւ զուարճանաք իրարու դեղով ,
 Երբ Սաքին մոգական գինին ձեռքը բռնէ ,
 Մէկ թշուառ այսինչը աղօթքնուշ մէջ յիշեցէք :

28

Մէկ բաժակ գինի հարիւր սիրտ ու գէն կ'արժէ ,
 Մէկ ումպ գինի Զինաց աշխարհը կ'արժէ ,
 Յակինթ գինիէն զատ աշխարհի վրայ չկայ
 Թթու մը որ հազար անուշ հոգի արժէ :

29

Եթէ ան կ'ուզես՝ զատուէ կնոջմէ ու որդւոցմէ ,
 Առնաբար ընտանիներէդ ու բարեկամներէդ զատուէ՛ .
 Ամէն բան որ կայ՝ ճանապարհի վրայ արգելք է՛ քեզ ,
 Արգելքներով ի՞նչպէս ճամբայ կ'երթաս՝ մէկդի նետէ՛ արգելքը :

ՁԷ

Այդ յակինթը յստակ ապակիի մէջ բե'ր .
 Ազատներու այդ ընկերն ու մտերիմը բե'ր .
 Գանի որ դիտես թէ այս հողիդէն աշխարհիս տեւողութիւնը
 Հողմ է որ շուտ կ'անցնի կ'երթայ— գինի բե'ր :

ՁԸ

Ելի'ր եւ այս տանջուած սրտին դարման բե'ր .
 Ան մշկանոտ վարդագոյն գինին բե'ր .
 Երբ հողերու սիրտբացիկ զեղը կ'ուղես,
 Յակինթ գինի եւ մետաքս վին բե'ր :

ՁԹ

Երէկ շուկան բրուտ մը տեսայ .
 Սաստիկ կը ծեծէր թարմ կաւը .
 Եւ ան կաւը խորհրդաւոր լեզուով իրեն ըսաւ .
 « Ես ճիշդ քեզի պէս եղած եմ, զիս լաւ պահէ » :

Ղ

Խմէ' սա գինիէն որ յաւիտենական կեանք է ,
 Խմէ' անկէ որ երիտասարդութեան հաճոյքին դրամագլուխն է ,
 Անկէ որ կրակի պէս այրող է, բայց հողերը
 Կենդանարար ջուրի պէս կը փարատէ :

Ղԅ

Կրօնքի կանոնները մի' կատարեր, եւ պատուիրանները զանց ըրէ' .
 Եւ ան պատառը որ ունիս մի' վլանար ոչ մէկուն .
 Մի' անիրաւեր ոչ մէկուն, եւ ոչ մէկուն սիրտը մի' ցաւցներ .
 Անդիի աշխարհի գործը ես վրաս կ'առնեմ, գինի բե'ր :

ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Թարգմ. պարսկ .
 Գ. ՓԱՌՆԱԿ

ՊՍՏԱԿԱՆ ՏՈՒԻՄԱՆ ՄԸ

ՀԵԼԼԵՆՈՒ ՀԻՆՆԵՐՈՒՆ ԲՈՂՈՒՐ

Պ. Մ. Սվազլեան, որ քիչ ատենէն «Անա-
հիտ» մէջ պիտի սկսի հրատարակել շարք մը
յողուածներ յունական նոր գրականութեան
վրայ, այժմ մեզի կը դրկէ թարգմանութիւնը
յունական անկախութեան պատերազմին վե-
րաբերող գեղեցիկ տօքսիմանի մը. նամակ
մըն է զոր յոյն կիները ուղղած են 1825ին,
պայտարին ճիշդ մէջտեղը. և րոպայի հելլենա-
ստի կիներուն, բողոքելու համար յունական
դատին նկատմամբ Եւրոպայի բոնած անտար-
բեր ու նոյն իսկ թշնամական դիրքին դէմ.
« Այս նամակը, կը յրէ Գ. Սվազլեան, գեռ
վերջերս գտնուած է մատենագարանին մէջ
Հիտրա կղզիին մին Արչիպելագոսի այն կղզ-
գիներէն որոնք Յունաց ազատագրութեա
դայտարին մասնակցեցան գրուած է այն ժա-
մանակ տիրապետող հնադրոշմ յունարէնովը,
քայց սոգոյուած է անական շունչով մը որ
յոյն գրականութեան այժմեան արտադրու-
թեանց մէջ կը պակսի և որ կը ցոլացնէ
1821ի մարտիկներուն հերոսական հոգին, և ա-
մակին ներքե ստորագրած են կիները շատ մը
յոյն ազատամբներու որոնք ծովի ու ցամաքի
վրայ իրենց քաջութեամբը փայլեցան »

Հաճոյցով կը հրատարակենք այս տօքսիմանը
որ հոյակապ ազատակ մըն է Եւրոպայի երեսին
փակցուած, և որ այսօր, եօթանասունեւեօթը
տարի յետոյ, իր այժմէութիւնը պահած է,
քանի որ Հայ կամ Մակեդոնացի կիներն ալ
պիտի կարենային այսօր՝ Ի. դարուն սկիզբը՝
զայն ստորագրելով ուղղել (և աւելի իրա-
ւամբ) քրիստոնեայ(1) և քաղաքակիրթ(?) և Ե-
րոպային : Այդ տօքսիմանը շահեկան է սակայն
ամենէն աւելի այն ինքնավստահ և անվատ
արութեան ոգիովը, պայտարը մինչև վերջը
շարունակելու անվկանդ և զիւցաղնական ո-
րոշողութեամբը որ հոն հզօրապէս կը յայտ-
նուի : Այս բոլոր տեսակէտներով, անոր ըն-
թերցումը հաճելի և օգտակար պիտի ըլլայ
մեր հասարակութեան :

Յունաստանի բարեկամութիւնք

Փերկամայի բողոքարկ ոչնչացումը միտքի
արիւնտուշա ու անմարդկային կոտորածը, Կրէ-
տէի և Քասոսի աւակնիկալ նուաճումը, Փոս-
րայի քանդումը, Յունաստանի զանազան քա-
ղաքներուն և գիւղերուն հրգեհումն ու թա-
լանումը, և այս բոլոր աղէտքներուն արտա-
դոնները գեռ կենդանի են մեր մաքսի մէջ :
Տեսնենք մայրեր որ իրենց աղջիկներուն գր-
կին մէջ անան, աղջիկներ որ իրենց մահաճիճ
ծնողքներուն մօտ հոգինին աւանդեցին, և Ե-
րածիններ՝ իրենց անկենդան մօրը կուրծքին
կապուած : Մերկու թիւը, անօթութիւնը,
ցուրտը և մահը, որոնք այս շարիքներուն հե-
տևանքը եղան, ամենափոքրերն ու ամենէն
թեթեւներն են այն աղէտքներուն որ մեր
արտանուալից աշխրտուն հանդէպ պարզե-
ցան : Քոյրեր ու եղբայրներ կորսնցուցիւք,
մենէ շատերը որք և անապատան մեռցին :
Աշխարհիս վրայ չկայ դժբաղդութիւն որ կրած
չըլլանք : Ո և և, բանաստեղծի երեւակայնու-
թիւնը անկարող պիտի ըլլար աստեղծել այն
անոնի և անորակի շարիքները որոնցմով
տառապեցանք կամ որոնցմով ուրիշներուն
տառապիլը տեսանք :

Բայց, ո՞վ Յունաստանի բարեկամութիւնք,
ձեզ կ'ապահովցնենք որ այս ցաւերէն և ոչ
մէկը մեր սիրտն այնպէս չծակեց ինչպէս ան-
դիութիւնը, չըսելու համար՝ վայրագութիւնը,
զոր մեր ազգին նկատմամբ ցոյց տուին՝ շա-
տերն անոնցմէ որ կը պարծին թէ իմաստուն
Եւրոպային մէջ ծնած, բարձր բարոյականի
շատ մը հրաշալի գրքեր կարդացած են և զի-
րենք Աւետարանին հետեւող ու առաքինու-
թեան ամենէն փառաւոր քարոզիչներուն ա-
շակերտ կը հռչակեն :

Այո՞, ո՞վ հելլենասէրներ, այդ տառապանքներ
իրօք մեծ են և ահաւոր, բայց մեր հայրենի-
քին ազատութեան յոյսովը, այն անզուգական
քաջութիւնովը որով մեր քոյրերէն շատերը
նախընտրեցին վիճերուն մէջ նետուիլ կրակ-
ներու մէջ մրկիլ կամ գազաններու կեր ըլ-
լալ. անապատներու և քարայրներու մէջ ա-
նօթութեան դէմ մաքառիլ քան թէ թուրքե-
րուն ստորնացուցիլ գերութիւնը կրել, այն
զազափարովը թէ այդ բոլոր մենք քայեցին :
մեր հայրենիքին սիրոյն համար, այդ բո-
լոր տառապանքները մեզի հանդուրժելի

եւ նոյն իսկ միտքարիչ դարձան : Եւ արդէն այդ տեսակ թշնամիներէ մենք կը սպասէինք այսպիսի չարիքներ :

Բայց ո՞վ չենք ըսեր՝ մօր հայրենակիցներէն, այլ նոյն իսկ սա թուրքերէն, պիտի երբեք յուսար որ հարիւր միլիոնէն աւելի քրիստոնեաներ, անհաւատալի անտարբերութեամբ մը՝ որպէս թէ հոմէական ամփոթարոնի մը մէջ գտնուէին : պիտի դիտէին բոլոր միացած թուրք հրոսներուն քրիստոնեայազգի մը վրայ կատաղաբար խուժելը՝ զայն հուրով ու սուրով ջնջելու համար : Եւ ինչո՞ւ , որովհետեւ այդ քրիստոնեաները որոշած են իրենց հայրենի հողը ազատագրել, որպէսպի թուրք վագրերը գիրենք չփողոտեն :

Ո՞վ երբեք պիտի մտածէր թէ Կուրանը աւելի ուժ պիտի ունենար թուրքերը միացնելու մեզի դէմ մղուած այս պատերազմին մէջ : քան ինչ որ չունեցան մինչեւ ցարդ Եւրոպայի գիտուններուն աղաղակները եւ քարոզիչներուն քարոզները՝ քրիստոնեաներու համակրութիւնը չահելու համար մեզի ի նպաստ :

Բայց այս անտարբերութիւնը , կամ, ինչպէս կ'ուզեն զայն կոչել , այս չէզոքութիւնը , թեւրեւս թելագրուած է Եւրոպայի քաղաքական պետքերէն եւ կամ Եւրոպական պետութեանց հաւատարակչութիւնը պահպանելու փափաքէն՝ ինչպէս կը թուին մեզի յայտնել մեր ազգին շատ մը գիտունները : Բայց մեզի համար միակ պարկեշտ եւ ուղիղ քաղաքականութիւնը կը կայանայ օգնելու մէջ անոնց որոնք անարդարօրէն կը հալածուին , անողորմաբար կը տանջուին , մանաւանդ երբ Եւրոպա կարող է այդ նպատակին հասնիլ՝ առանց ամենափոքր վնաս մը կրելու եւ առանց մեծ զոհողութիւններ յանձն առնելու :

Բայց աւելին կայ : Քրիստոնեայ Եւրոպան չի շատանար անտարբեր կամ չէզոք մնալով : Մարդուն խղճմտանքը ոտք կ'ելլայ երբ կը տեսնէ Եւրոպացիներ որ խորհուրդ կուտան, կ'օգնեն թուրքերուն , եւ անոնց զաշնակիցներն ու զինակիցները կ'ըլլան, որպէս թէ թրջական բանակները չբաւէին մեր սակաւաթիւ զինուորներուն դէմ կողակու եւ որպէս թէ անոնց նաւատորմիզը անկարող ըլլար մեր տկար ու զաւթազփուն նաւերուն դիմադրելու : Ո՞վ չի սարսափիր տեսնելով որ խաչը կը զաշնակցի Մահիկին հետ՝ քրիստոնեաներու փոքրիկ խումբի մը դէմ որ խաչն իսկ պաշտ-

պանելու համար կը կոռուի : Մ'ով կրնայ չցուելի ու չսխրիլ իմանալով թէ այդ ինչպիսիքնին Եւրոպացի անուանողներէն շատերը մեր պատու թիւններուն լուրն առած ատեննին նորանոր պարեր ու հանդէսներ կը սարքեն :

Չենք գիտեր թէ պատմութիւնը ի՞նչպէս պիտի արձանագրէ Եւրոպայի այդ անհասկանալի անզգայութիւնը : Բայց կը կարծենք թէ ան պիտի չկարենայ գտնել բառ մը բաւական արտայայտիչ՝ սահմանելու համար կատարած բոլոր չարիքը մեր հայրենիքին այդ անողորմ թշնամիներուն, որոնք նախ եւ առաջ անտարբեր ու չէզոք մնալէ յետոյ՝ հակառակ ամէն անակնկալութեան մուրհոսնդ մահմետականներու փոխուեցան հիմա եւ որոնց վայրենութիւնը կը գերազանցէ մեր թշնամիներունը : քանի որ մեզ Տաճիկներէն աւելի կ'ատեն ու անոնցմէ աւելի ամէն կերպով կը ջանան մեզի վնասել : Եւ առոնք մեր կրօնակիցներն են , զոր մենք եղբայր կը նկատէինք եւ որոնց ոչ մէկ գէշութիւն չենք ըրած ու չենք կրնար ընել :

Եթէ կը վախնան որ մահմետականներութիւնը պիտի նուազեցնենք եւ այդ պատճառով է որ զանոնք կը պաշտպանեն , թող յիշեն թէ Ասիոյ եւ Ափրիկէի մէջ աւելի մահմետական կայ քան թէ քրիստոնեայ՝ ամբողջ աշխարհիս մէջ : Եթէ կը կարծեն թէ թուրքերուն կողմը բռնակող անոնց բարեկամութիւնը վաստակած պիտի ըլլան , թող գիտնան թէ անոնք պիտենք կ'արհամարհեն ու կը նախատեն , անպատու մարդիկ կը համարին եւ «անհաւատ ու մատնիչ» կ'անուանեն : Կը պարծենան՝ եւ իրաւամբ՝ թէ իրենց մէջ մէկ հոգի 'ը կարելի չէ գտնել որ մահմետական հայրենակից մը մատնէ մինչդեռ ա՛յնքան քրիստոնեաներ կան որոնք կը հալածեն ու կը մատնեն իրենց կրօնակիցներուն մէկ փոքր խումբը որ իրենց հաւատքին ու հայրենիքին համար կը պայքարին :

Այս պարագաներուն մէջ՝ Եւրոպայի այս արտասովոր հալածանքը ի՞նչպէս մեզի անհանգուրժելի չերեւայ քան բոլոր չարիքները զոր թուրքերը մեզի պատճառեցին : Ի՞նչպէս մեր սիրտը չխոցուի՝ տեսնելով որ այս դժնդակ պայմաններուն մէջ ուր կը գտնուինք , մեր կրօնակիցները ոչ միայն գութ չունին մեզի նկատմամբ , ոչ միայն անտարբեր ու չէզոք չեն կենար՝ ինչպէս իրենք կը յայտարարեն , այլ մեզ կը հալածեն , մեզ կը նեղեն ան-

պթորէն, մեզ կը մատնեն անորակելի կերպով .
 Թուրքերուն խորհրդատուները կ'ըլլան մեզի
 դէմ, անոնց ուտեստ ու տղաւորազմական պա-
 շար կ'ը տանին , անոնց բանակին առաջնորդ-
 ներ կը հայթայթեն , անոնց զէնքերը կը սրեն
 մեզի դէմ :

Ոչ մեր դժբաղդութիւնները, ոչ մեր ցաւերը,
 ոչ մեր տառապանքները, ոչ մեր անպատմելի
 թշուառութիւնները չեն զօրեր իրենց սիրտը
 շարժելու : Որքան մեր թշնամիները մեզի դէմ
 կուռելու կը պատրաստուին՝ զինուորական ու
 նաւային ուժեր կուտակելով , այնքան մեր
 Եւրոպայի թշնամիները մեզի դէմ վայրագ կը
 դառնան , Թուրքերը իրենց ազգականները, բա-
 րեկամները, կրօնակիցներն են . Թուրքն է , կ'ը-
 սեն , միակ ազգը որ պէտք է տիրէ Յունաստա-
 նի վրայ :

Այս բոլոր շարիքներուն հանդէպ , քիչ մը
 սփոփանք կը վզանք սակայն երբ կը մտածենք
 թէ մեր անորակելի թշնամիներուն այդ ա-
 րարքները իրենց վեհապետներուն անծանօթ
 կը մնան . որովհետեւ մեզի համար գոյուար է
 հաւատալ թէ այս վերջինները գիտեն ընթացքն
 իրենց այդ հպատակներուն որոնք կ'անպա-
 տուեն իրենց ազգն ու իրենց պետերը , որոնք
 արհամարհելի կը զարձնեն Եւրոպայի անունը
 եւ Քրիստոնէութեան անունը ատելի : Բայց
 մեր ճշմարիտ մխիթարութիւնը կը կայանայ
 սըւոր մէջ , որ մեր ցաւերուն անտարբեր մը-
 նացող այնքան Եւրոպացուց մէջ՝ գտնուեցան
 նաեւ ժարդիկ որ արժանի են այն ազգին որուն
 անունը կը կրեն , մարդիկ որոնք՝ Յոյներուն
 համար իրենց տածած սէրէն միայն մղուած՝ ոչ
 միայն իր ազատութեանն ու անկախութեանը
 համար մաքառող Յունաստանին չհակառակեցան
 ոչև վտանգին մէջ զայն խրախուսեցին եւ ա-
 նոր օգնութեան եկան երբ անոր գանդաչելը
 տեսան : Ատոնք ահա մարդիկ են , որ կերպով
 մը կը հակակշռեն այն խարանը որ միւսներուն
 անտարբերութեանը վրայ դրոշմուած է :

Այո՛ , վեհա՛նձն հոգիներ, եթէ կարելի է սրը-
 բել արատը զոր կը կրէ Եւրոպայի ընթացքը
 այդ վերջին հինգ տարիներու միջոցին , դուք
 միայն կրնաք այդ բանն ընել : Եթէ կարելի է
 լուալ աղտը որ քրիստոնեայ անունին կ'պած
 է , դուք միայն կարող պիտի ըլլաք զայդ կա-
 տարել : Վեհա՛նձն մարդիկ , ազգը ձեզի ե-
 րախտագէտ ըլլալու պարտական է , եւ ձեր
 պատկերը անոր օրտին մէջ քանդակուած է :

Յունաստանի օրդիները ձեր անունը յարգան-
 քով պիտի արուստանեն եւ ձեր թոռները պիտի
 պարծին ձեզի պէս նախահայրեր ունեցած ըլ-
 լալնուն : Ի՛նչ սփոփանք մեր ցաւերուն , եւ
 ի՛նչ մխիթարութիւն մեր թշուառութեանց
 մէջ երբ իմացանք թէ գտնուած էին նաեւ
 կիներ որոնք մեր դժբաղդութեանց վրայ
 կուլային , մեր յաջողութիւններովը կ'ուրա-
 խանային , որոնք շատ մը անձեր մղեր են մեր
 ազգը սիրելու եւ որոնք մեր փրկութեանը
 նպաստեր են . . .

Այո՛ , Յունաստանի բարեկամուհիներ՛ , կըս-
 կիծը զոր մեզի համար դուք զգացիք , յաճախ
 թեթեւցուց մեր ցաւերը , արցունքները զոր
 դու մեզի համար թափեցիք՝ մեր արտասուքը
 քաղցրացուցին եւ մեր յաղթանակներուն հա-
 մար ձեր զգացած հրճուանքը մեր երջանկու-
 թիւնը կրկնապատկեց :

Ի՞նչք վստահ ենք որ մեր հայրենիքը պիտի
 ազատի , թէպէտեւ անոր դէմ կը պայքարին
 յայտնի կամ թաքուն ա՛յնքան թշնամիներ :
 Մենք հաւատք ունինք աստուածային նախա-
 խնամութեան , Յունաստանի ճշմարիտ զա-
 ւակներուն եռանդին , մեր վարիչներուն քա-
 մաստութեանը , մեր զօրապետներուն եւ վի-
 նուորդներուն գիւցազնութեանը , մեր ծովա-
 կալներուն եւ նաւազներուն քաջութեանը ,
 մեր հրձիգ նաւերու հրամանատարներուն
 յանդգնութեանը եւ մեր ճշմարիտ բարեկամ-
 ներուն վրայ , որոնք բոլորն ալ պիտի մեզի
 նպաստեն մեր թշնամիներուն յաղթելու կա-
 րելի է սակայն որ մենք ողջ չմնանք՝ ակա-
 նատես ըլլալու համար այն գեղեցիկ ու ցան-
 կալի օրուան երբ Յունաստանը պիտի ձեռք
 ձգէ իր իսլիմ ազատութիւնն ու անկախու-
 թիւնը : Սակայն , մեր վրայ յեռ ծանրացող
 բոլոր շարիքներովն հանգերձ՝ մենք գոհ պիտի
 մեռնինք , որովհետեւ պիտի մեռնինք հայրե-
 նիքին ազատմանը համար եւ առանց այլեւս
 ստրուկներն ըլլալու բոնաւորութեանց անար-
 զապոյնին : Բայց աչքերն իս գոցելէ առաջ ,
 զարասկանութիւն ունինք այստեղ արձանա-
 գրել՝ անոնց համար որ մենէ կտքը ողջ պի-
 տի մնան , սա իրօղութիւնը թէ՛ թէպէտեւ
 գտնուեցան թշնամիներ որոնք անողորմաբար
 կուռեցան մեր ազգին դէմ որուն ազատութեան
 համար մենք կը մաքառինք , չպակսեցան սա-
 կայն մարդիկ որ խօսքով ու գործով Յունաս-
 տանի համար իրական բարեկամութեան մը

ապացոյցը տուին : Կ'ուզենք մանուսնդ որ գիտնան թէ հելլենասէրներուն մէջ կիներ գտնուած են որոնք ձայն են բարձրացուցած ի նպաստ Յունաստանի, որոնք կրցածուին չափ օգնած են անոր, շնորհաւորած են յոյն կի- ները իրենց հայրենիքին տարած յաղթութեանց առթիւ : մասնակցած են մեր սուզերուն, մէկ խօսքով՝ ճշմարիտ յոյն կիներու պէս Յու- նաստանի բազմին հաղորդակից են եղած : Խորհուրդ կուտանք մենէ ետքը ողջ մնացող մեր հայրենակիցներուն, որ մեր անբանաւոր թըշ- նամիներուն դէմ ոխ չպահեն, ոչ մէկ շարու- թիւն չմաղթեն անոնց՝ բայց միայն որ անոնք բաւական երկայն ատեն ազրին որպէսզի աչ- քովնին տեսնեն յաղթանակն այն Յունաս- տանին որուն դէմ ա՛յնքան կռուեցան : Որով- հետեւ մենք կը կարծենք թէ իրենց խղճին խայթը, իրենց անունին վրայ գրոյշմուած խա- րանը, այն անպատուիչ ու անփառունակ ժա- ուանութիւնը զոր պիտի թողուն իրենց զա- ւակներուն, բաւականաչափ պատիժ մը կը կազմեն իրենց համար : Գալով ձեզի, ո՛վ վեհ- անձն բարեկամուհիներ Յունաստանի, մեր հայրենակիցներուն մենք իբր նշանաբան կը թողունք օրհնել ու զովել յաւիտեան ձեր ա- նունը, երբեք չմոռնալ երախտագիտութիւնը զոր ձեզի կը պարտին եւ իրենց զուտրերուն աւանդել իրենց սրտին այդ քաղցր զգացումը : Իսկ մենք, թէեւ չենք կրնար այժմ մեր կուրծ- քին վրայ կրել ձեր կենդանագիրը՝ «հելլենա- սէր» վերտառութեամբ, զայն մեր սրտին մէջ քանդակած ենք սակայն եւ ձեր անունը մեր բերնէն պիտի չհեռանայ՝ որքան ատեն որ ողջ մնանք :

17 Ապրիլ 1825

Թարգմ. յունարեկե
Մ. ՍՎԱ. ՋԼԵՆՆ



ՀԱՅ ԷՋԵՐ

— 0 —

ԵՐԵՄԻԱ ՓԷՕՄԻԻՐՃԵԱՆ

Սվածեանի գործին նուիրուած մեր առաջին յօդուածին մէջ յիշած էինք Երեմիա Փէօմիւր- ձեանի անունը, այսօր կը հրատարակենք հինգ քերթուածներ այդ բազմահմուտ ու բազմաձեւ գրագետէն, որուն վրայ Պ. Յ. Գ. Մ. իր «Հին Օրեր» գրքոյկին մէջ հետեւեալ տեղեկութիւն- ները կուտայ :

«Տասնեւեօթերորդ դարուն՝ այդ մեծերուն մէջ էր նաեւ ներհունն Երեմիա Չէլէպի Քէօ- միւրճեան, բարեկամ Այնթապեցի Եղիազար կաթողիկոսին, նօտար եւ գրագետ ու մատե- նագիր մեծատուն՝ երէց եղբայրը Տէր Կով- տասի, որ եւ նախ Սամաթիայի Ս. Գէորգ ե. կեղեցիին աւագ սարկաւազն էր եւ վախճա- նեցաւ 60 տարեկան 1695ին : Գրած է հինգ գիրք Պատմութիւն Օսմ. թաղաւորութեան ընդարձակ գիրք մը անոր համառօտութիւնը, միւս գիրք մը ոտանաւոր՝ Յակոբ կաթողի- կոսի խնդրելովը Ազեքասնցրի պատմութիւնը՝ նոյնպէս ոտանաւոր : Թարգմանած է թուրքե- րէնի Խորենացիէն քաղուածներ, գրած է զեր- ման դեսպանին խնդրելովը՝ պարսկական, հնդկական եւ Փոքր Ասիայի աշխարհագրու- թիւններ, գիրք մը ընդդէմ Հրէից, քարոզներ, ճառեր՝ հայերէն, տաճկերէն, պատմութիւն Երուսաղէմի : Թարգմանած է թուրքերէնի Աւե- սարանն եւ ինչ ինչ կտորներ Հին Կտակա- րանէն : Թարգմանած է յունարէնէ ու լատինե- րէնէ գրքեր, տպագրել տուած է իր հսկողու- թեամբ երկու հատոր գիրք-Մնացորդ Յիսուս Որդւոյ, եւ Տնօրինական տեղիք, գրած է ժա- մանակակից խնդիրներուն վրայ՝ ընդարձակ նամակներ առ կաթողիկոս եւ պատրիարքունս, նաեւ յորդորականներ, տեղե. ազիրներ ու յիշա- տակարաններ, վանքերու վարչութեանց եւ արտունութեանց վրայ : ճանապարհորդած է Փոքր Ասիայի շատ մը քաղաքներն ու զիւղե- քը, ինչպէս նաեւ Պէրութ, Բերիայ, Երուսաղ- զէմ, Արմաշ, եւն : Գրած է նաեւ սուղու- թեամբ իր ժամանակին պատմութիւնը, որմէ Չամչեան առած է շատ բան : մենք շատ փնտը- ւած եւ հարցուցած ենք իր այս գործերն ու

լենք գոտած նոյն իսկ ամենէն բազմամուտ
անձերու քով եւ ամենէն բազմահասոր մատե-
նադարաններուն մէջ. կը թուի շատոնց ինկած
են Վենետիկի մատենադարանն ու հասկաքա-
ղուած վարդապետ մատենագիրներէն իր գրա-
րատն ունի խաթուն արծաթի ձուլուած մը՝
տարրեր փամանակին լատինախառն անոճ ոճէն,
որ ճարակելու վրայ էր Ոսկան Երեւանցիին
հրատարակութիւններովը. իր սպուած քանի մը
հատուածներէն կը համարձակինք ընել այս
դատաստանն ալ: Երեմիա Չէլչպին՝ ցաւսիր-
անձնաւորութիւն մըն է եղեր, ու իր գրակէն
յառաջադիմութիւնները՝ դարի մը կանխումն
են Վենետիկի ու Պոլիսի գրական նախանցեալ
դարի զարգացումներուն. իր ծագումն է Ա. կնէն,
1600 թուին:»

SUՂՔ ԵՐԵՄԻԱ ՎԷՉՄԻՒՐՃԵԱՆԻ

(Երեմիա Չէլչպի, Կոստանդնուպոլսեցի, որդի
Տէր Մարտիրոսի Վէտիւրճի կոչեցելոյ,
եւ երէց եղբայր երանելոյն Տէր Կոմիտասայ
նահատակի, ծաղկեալ ի վախճան ժէ՛ դարուն՝
բանիւ եւ գրով):

ԵՐԳ ՍԻՐՈՅ (1)

... Դըւելոյ է օծեալ իւղով պալատան,
Հոս գայ ամպէրի ի քո բուրաստան:

Մազերդ է զեղձան, սամուրի նըման,
Որպէս զթել փայլուն. ե՛կ ի մեր պաղչան.
Ճակատդ է զերթ սաթ՝ սատաֆի նըման.
Փայլեալ քան զգոհար ի քո բուրաստան:

Ուներդ է բարակ զալէմի նըման,
Յօրինեալ կամար. ե՛կ ի մեր պաղչան,
Աչքերդ է զերդ ծով, ովկեանու նըման,
Կանթեզ է ի վտ, ի քո ծաղկաստան:

Երեսդ արեգակ լուսին ի լրման,
Պայծառ՝ և անարատ. ե՛կ ի մեր պաղչան.
Ակոռդ մարգարիտ սպիտակ շարման,
Պիւլպիւլն՝ քաղցր երգէ ի քո վարդաստան:

Բերանդ է անուշ նէզաթի նըման,
Ինչպէս մեղր ի ծոր. ե՛կ ի մեր սահրայն:

(1) Այս տաղերը աշուղի լեզուով են գրուած
եւ կարծենք թէ անսիւպ են:

Լեզուդ է համեզ քան զգինի նըման.
Չմաչեցայ այժմիկ ի քո այգեստան:

Դուռնչդ է զեղեցիկ բոլորանըման,
Շնորհատիւ պատկեր ե՛կ ի մեր սարայն.
Շրթունքդ է շէրպէթ շիրին շէքէր լապ,
Կաթեալ ի սիրտն իմ. ե՛կ ի մեր սեղան:

Ի ՎԵՐԱՅ ՁՐՈՅ

Երամք երկնային թռչնոց խմբեցան,
Հա՛ք մեր կանդ առին յեզերդ զանազան,
Մնչին կարկաչին երգին քաղցրաձայն,
Կեզ հարցմունք լինին ու կան հայցական:

Հեռուստ՝ և ի մօտոյ կան քեզ փափաքման.
Վախեն մերձենալ՝ չըլինին կոխան.
Ճար չունին գալոյ տեսոյդ դէմ գողման,
Կեզ երգս յարմարեն յոյժ աղերսական:

Փոքր մի տուր համբեր առ մեզ օթեւան.
Եզիր դու մեզ հիւր մուտ մեր յանդաստան,
Քեզ ծառայ լինիմք լե՛ր ասպնջական.
Ի խորոց սրտէ կամք քեզ մաղթական:

Գիտեմք շատ ունիս խնդրող սիրական.
Որ յորդոր ընթաց կաս ի ծիծաղման.
Մեզ այ՝ փոքր մի սէր տո՛ւր, ա՛յ սիրական.
Ա՛յ սիրու պատճառ, սիրոյ շանմարան:

Ա՛յ ջուր բարերար պատքելոց արբման,
Ննգճա՛ կանանչիցդ որ կան նիկեարան,
Նոքա գլխիկոր թարշամեալ ողբան,
Դու ծիծաղելով ծառայ ծածանման:

Մաւալի՛ր յայգիս պարտէզ՝ և ի պաղչան,
Ձուր տուր այս ծաղկանց որ քեզ ծարաւ կան
կողճա՛ այս տնկոցս ոտոցեա՛ զհամայն.
Ապա՛ թէ երթաս ծաւալ ծիծաղման:

Խոնարհեալ իջի՛ր ի մեր բուրաստան,
Որ հասրաթով ինթիզար եղան,
Պատուեն մեծարեն քաղցր հոտով բուրման,
Դու ծաղի՛ր ծառայ ծիծաղ ծածանման:

Մանուշկան խղճա՛, վզիկն է կեռման.
Նօսօփար ծաղկին երեսն է զեղձան:

Նորա թառամեալ քեզ է յին մեան ,
Դուձափ զծափի ծփիս ծաւալման :

Յերկնից երեսէն ամպերքն փախան ,
Արեւն ծագեալ քեզ պայծառ վրան ,
Պատեաց խնդու թիւն, սրտիկս է զողման ,
Դու ծիծաղ ծաւալ ծալ 'ւ ի ծածանման :

Մտախուզն կորեաւ որ մեզ էր չ - րկամ ,
Իմ սիրտս լցուաւ արեւով գարնանն ,
Երբ ցուցեր զերեսդ զարդարեալ փայլման ,
Միծաղ ծածանից ծալ 'ւ ի ծածանման :

Աէր մեր ի հետ քեզ կայ որ կայ ծրարման ,
Կրկին նորոգեմք ա՛յ իմ սիրական ,
Ես կարօտ կայի տեսոյդ փափաքման ,
Դու ծիծաղ ծալիս ծաւալ ծածանման :

Ես եմ քեզ պատքեալ յոյժ ծարաւական ,
Տուր ինձ զքո մաքուր կաթիլը որ յաղձամ ,
Դու ընթացք առնես ի յորդորական ,
Ես փութամ հետոյդ ու կարօտ մնամ :

Դու խաղաս փութաս ի յորդորական
Ձսիրտս ի քեզ քաշես տանիս ըզձական .
Հոգեհան եղաւ նա զերթ մանէման ,
Ճոճալով ճեմես, սիգաս ճոխական :

Ձայնիդ եմ փափաք տեսոյդ կու բաղձամ .
Քու անուշ խօսիցդ սրտիկս է զողման ,
Դու ճեմես ճոճաս ի նազ սիգական ,
Ես կարօտ մնամ ի քո տեսութեան :

Ոտիցդ հետոց սրտիկս է զողման ,
Այրէ ու լափէ քալքըդ մանէման ,
Դու ընթացք առնես ճոխաս ճոճական ,
Ես տապ 'ւ ի տագնապ այրիմ յանդիման :

Դու գնաս փութով ի յորդորական .
Իմ խելքս ու խէյալս հետոցդ ըզձական .
Դու դիմես գնաս նազով ճեմական .
Ես ի տեսոյդ այրիմ կամ ի փափաքման :

Թէ զայլք չես խղճար շատ ցաւ քո նիզան ,
Խեղճ նազինի վարդն իմ պատուական ,
Որ եզեր եմ ես՝ տէրտէն սէրկէրտան ,
Դու խիթիկայով քալես մանէման :

Ես քո խապարիդ եմ լաց 'ւ ի ֆիղան ,
Դու ծիծաղելով ճեմես ծածանման :

Ես կու հորցանեմ զվարդն իմ սիրական ,
Դու խիթիկայով ծփիս ծիծաղման :

Ի ՎԵՐԱՅ ՏՐՈՅ

Ա՛յ ջուր պատքելոց դու զովացարան ,
Կարօտով եմ քեզ միշտ ի փափաքման .
Դու նազես խաղաս ի յորդորական .
Սրտակաթ առնես ծալից ծաւալման :

Ակնէդ զրոյց տուր որ ես իմանամ ,
Քո օրհնեալ բունոյդ եւ դքո կայան ,
Միթէ ի ձիւն կայ քեզ ամբարական ,
Սառնարուխ բիես քաղցր եւ բարեկամ :

Ա՛յ դու բարեբու ի բարեաց շտեմարան ,
Ի մեր սիրելեաց թէ ունիս պատգամ ,
Կամ ողջոյն բերիս ընծայ 'ւ արմաղան ,
Ես քեզ խաղ ասեմ տաղ եւ շարական :

Ա՛յ ջուր գու լցեալ փառօք զանաղան ,
Յաջմէ 'ւ անկէ կաս մեծարական .
Քեզ յերկուց կողմանց ուր հեաք երթան ,
Միտեալք կանգնեալ քեզ ճորտ եւ պաշտպան :

Բոյսք եւ տունկք ցանկեալ ի քեզ պահապան ,
Կանաչ ու կանաչ զլրան ու սայպան ,
Մտք կանգնին յողջոյն քս ոլերճ ընթացման .
Խոնարհ զգլխով ճամփին բարեւ տան :

Շամբի եղեգնայք ծափ զծափի տան ,
Քեզ երգս յօրինեն պատիւ ընթացման .
Քեզ պաղաւէտ բոյսք զպտուզս ընծայման ,
Թօթափեն ի քեզ շնորհուկս գալստեան :

Հողմը քաղցրաշունչ քեզ եւ երգարան ,
Մաղկունք զհոտ անուշ բուրումն քեզ տան ,
Ու մանրիկ ցօղով վարդէջուր քեզ տան .
Դու վէտ վէտ ի խաղ լինիս մանէման :

Մաղկապըսակիս ծառ զարդարական ,
Որ կարգաւ յեզերդ կանգնեալ փնճական ,
Ի պատիւս նոցուն խաղաս մանէման ,
Մալիս ծաւալիս ի յորդորական :

Գաղանք 'ւ անասունք , սեռք ազգի մարդկան ,
Մարաւ քեզ դիմեն , սրտիւ զովանան ,
Ձաղտս համայն սրբես դու մաքրողական ,
Ձարարիչդ օրհնեն եւ միշտ պահանան :

Ի ՎԵՐԱՅ ՉՐՈՅ

Ա՛յ ջուր յորդախաղ գետոյդ , յորդական գետ յորդորական ,
 Ա՛յ ջուր ճոխակուն ընթացք , ո՛ւր երթաս յորդախաղական :

Ա՛յ ջուր , քեզ հարցունք ելի , քո գնացքդ է վաղվաղական ,
 էջքդ է ի լերանց բարձանց , ո՛ւր դիմես այդպէս փութական :

Ա՛յ ջուր դու պարծանք ձորոյս , փառք դաշտիս մերոյ զարդական ,
 Ասա՛ ինձ ո՛ւստի կուգաս , կամ ըշտապ ո՛ւր ես գնացական :

Ա՛յ ջուր դու զըւարճադէմք , եւ պատճառ երկրիս շինութեան ,
 Տեսիլդ է ուրախ ֆէրահ , եւ քո քայլքդ է ճարտարական :

Ճանփաքդ է յերկար թէ կարճ կամ հանգիստ փողոց գալստեան ,
 կամ որ ի պայճառական , դու բխես քաղցր եւ բարեհամ :

Որո՞յ ես գու սպասաւոր , ո՛ւր վարես տանիս շուս պատգամ
 Ոտքդ է անարգել , ի մեզ վաղվաղես միշտ միշտ յորդորման :

Քանի առաւել քո ելք անցքդ ի մեզ որ կաս ընթացման .
 Միայն զերեսդ ցուցեր փութ անցնիս դու անպատասխան :

Ձծարաւ լցեր դու մեր , մեզ ձկունք բերեր ՚ւ արմաղան .
 Դնա՛ , ճամբաքդ ի բարի , բարերար բարեաց շտեմարան :

Հազար զենեհար տամ քեզ , ա՛յ օրհնեալ ջուր բարեհամ .
 Ուր երթաս բարե տանիս ուր գտնուս մեզի սիրական :

Ի մէջ մատուցես յողջոյն , եւ անես կան ի յողջութեան ,
 Կստեալ յեղերս իմ խնդան սիրելեօք մէճլիս ՚ւ ի սէյրան :

Յիմ ձայն ընթացից գունոյ եղանակս բերեն ձայն առ ձայն .
 Դեղգեղեն տաղս վայելուչս առ ձայնի գնացից իմ սաչման :

Մերթ սաչին խոսրովային , բեն կորճայք թնթիւ բարձրաճայն ,
 Մերթ ի ստեղական ոճիւ , հաւ ու հայ ծնկեր դիպական :

Յորդոր գնացիցս հանգոյն նուագեն յոյժ յարմարական ,
 Հրճուին ի տեսս եւ յընթացս , եւ խնդան ի խաղս իմ ՚ւ ի ձայն :

Ես զիւրեանք ուրախ առնեմ , ճոճալով ճեմեմ եւ խաղամ ,
 Մափ բզճափի հայեալ ճեպեմ , երգակցեալ նոցա քաղցրաճայն :

Նոքա յի՛ր խաղուց պարուց եւ ձայնից ի խրախուժիւն գան .
 Նոր երգս սկսեալ վասն իմ զիս գովեն ի ձայն գովասան :

Ի ՎԵՐԱՅ ՍԻՐՈՅ ԵՒ ԸՆԴՈՒՄԵՆ

Արեղակն որ է ստեղծեալ յաշարչէն ի բում գործն երթայ,
Քեզ է սպասաւ որ պատրաստ միշտ տալով զբարիս քեզ ընծայ:

Լուսինն ել եւ էջս առնէ՝ ուներուդ նման մանկանայ,
Երբ ձերութեան ի նման բոլորե սլ տիպըդ կերպարան:

Լալ ակն ու գոհար, անցին կաղուծն ու գմբուծն հընանայ
Այրի կոտորատի փշրի, գու ազնիւ եւ գեր քան զնոսա:

Ծխանելիք անուշունք, առժամայ է հոտըն նոցա.
Դու զցայգ եւ զցերեկ, հիւանդն որ ի քեզ զեղի գայ:

Սերվին սինավպէր չիմշատ, որչափ գովք նոցա վրայ կայ,
Հասակդ երբ ի շարժ ելնէ, նա յաշխարհս նորա գին չիկայ:

Վարդն որ ի կանանչ տերեւս ինքնագոյն կու պայծառանայ,
Շուտ մի թառամի թափի, քո տեսիլդ միշտ գեղեցկանայ:

Բուրաստանեացն չուշանք, եւ ի ջուրս որ վայելչանայ,
Գին չեն մազ մի թարթիչիդ վեր ի վայր որ տարբերանայ:

Մովուն քաղցրաօզ բացմամբ որ երկիրս ճոխութեամբ ցնծայ,
Գին չէ ծով ծով աչերուդ՝ քո սիրոյդ որ միշտ քաղցրանայ:

Սիրամարդ հաւն ու կաքաւ պիւլպիւլ տուտիքն ու հումայ,
Գին չեն վարդաթերթ շրթանցդ ըղընկացդ մատանցդ վերայ:

Սրեգակն ու լուսընկայն զոր ասի ի գլխու վերայ,
Բերան բանալուդ փոխան ծիծաղիլդ ի ծնկիս վերայ:

Լուս երեսդ երբ խոնարհի, լուկ զընես ի բազկիս վերայ,
Գիրկ ու ձոց սրտազուարթ նէ քէլամ մեռելս ողջանան:

(Ս. Ղազարու վանք
Ճաղարան թիւ 556)

ԳԷՄՔԵՐ

ՊԵՐՆԱՐ ԼԱԶԱՐ

Պերնար Լազար, որ միտաւ քանի մը ամիս առաջ՝ իր երեսունևեօթ տարեկան հասակին մէջ, մին էր ժամանակակից գէմքերու ամենէն ինքնատիպներէն ու ամենէն գեղեցիկներէն, եւ մէկէ աւելի տեսակէտներով իր գործը շահեկան է մասնաւորապէս մեզի Հայոց համար:

Լազար հրէայ էր, Ֆրանսայի մէջ ծնած եւ ֆրանսական շատ ամուր եւ ընդարձակ կըրթութիւն մ'ստացած, իր գործը խորապէս կը կրէ ցեղի եւ միջավայրի այդ կրկին ազդեցութեանց հզոր գրոշմը: Ոգիով «հրէական» է ան, ազնիւ ու յանգուզն ոգի մը: Ֆրանսական վեհանձն ու խիղախ մտածուծին մէջէն անցնելով՝ աւելի վճիռ ու սուր դարձած, արաբայատութեան մէջ՝ ան կը միացնէ հրէական խորհրդանշանականութիւնը ֆրանսական պայծառութեան:

Ոգիով «հրէական» է այդ գործը: Պէտք է բացատրել այս բառը: Մեր մէջ, ինչպէս ամէն ազգերու մէջ ընդհանրապէս, «հրէայ» բառը անախորժ ու գծուծ պատկեր մը կ'արթնցնէ, հոմանիշ կը թուի արծաթամոլութեան, խարդախութեան եւ ցածութեան: Ո եւ է իրազէկ անձ որ դիտէ այն կարևոր գործը որ հրէայ միտքը կատարած է քաղաքակրթութեան պատմութեան մէջ, կ'ըմբռնէ անարդարութիւնն այդ մոլեռանդութեան եւ տգիտութեան արդիւնք եղող վճուին: Անվիճելի է որ Հրէաները իրենց մեծամասնութեան մէջ ունին իրօք բարոյական խորին թերութիւններ: որոնցմէ անհնար էր որ զերծ մտքը հազարաոր տարիներէ ի վեր գերութեան ազարտիչ բազդին լծուած ցեղ մը բայց այդ ցեղը, իր թերութեանց հետ, ունի եւ շատ մեծ յատկութիւններ, կարծր ինքնավստահութիւն, անզուգական համարչխութիւն, եւ քաղաքակրթական

ամենաբարձր ձիրքեր, Հայերը, որ հազարամեայ ստրկութեան մը հետեւանքով՝ իրենք ալ զերծ չեն Հրէաներուն ունեցած թերութիւններէն. — մինչ անոնց յատկութիւններէն մէկ քանին կը պակսի կամ նոյն աստիճանով չի գտնուիր իրենց քով, — Հայերը ամենէն քիչ իրաւունք ունին Հրէաներու հանդէպ այդ անարդար արձամարհանքի դիրքը բռնելու: Հրէայ ցեղին վրայ թեթեւ քամահրանքով մը խօսողները կը թուին մոռնալ որ այդ ցեղը մարդկութեան տուած է Աստուածաշունչին հոյակապ քնարերգակները, Մովսէսի ու Յիսուսի պէս հսկայ հոգիներ որոնք տիեզերական ազդեցութիւն ունեցած են, Սփինոզայի պէս վսեմ իմաստասէր մը՝ բանավարականութեան քարոզիչ, Հանրի Հայնէի պէս պաշտելի բանաստեղծ մը, Մարքսի եւ Լասալի պէս ընկերաբաններ, Պրանտէի պէս քննադատ մը, եւ դեռ ա՛յնքան բազմաթիւ ու բազմաձեւ տաղանդներ արուեստներու, գրականութեան, գիտութեան բոլոր ճիւղերուն մէջ: Բայց ինչ որ ամենամեծ փառքը կը կազմէ Հրէաներուն, այն է որ իրենց հոգւոյն ու մտքին գերագոյն արտայայտութիւնն եղող այդ բոլոր անձնաւորութեանց գործերը, ձեւով որքան ալ տարբեր ըլլան, գրեթէ միշտ կ'եղբայրանան այն ոգիով որ անոնց խորքը կը կազմէ, եւ որ մարդկային արդարութեան ծարաւատենչ ձգտող ոգի մըն է: Մովսէսի՝ ինչպէս եւ մարգարէներուն մօտ՝ այդ ոգին կայ արդէն, եւ շատ հզօրապէս արտայայտուած, բայց դեռ եսական ձեւի մը մէջ. չարաչար հաշտուած, իրմէ շատ աւելի զօրեղ ցեղերէ միշտ հարուածուած, այդ ցեղը իր յոյսը կը դնէ երկնաւոր արդարութեան վրայ զոր իրեն համար միայն կը բաղձայ. (թէպէտ միեւնոյն ատեն իր մարգարէները զինքը կաւորէին կը կշտամբեն Արդարութեան, ճշմարտութեան, առաքինութեան դէմ իր իսկ գործած մեղանշումներուն համար, եւ իր դժբազդութիւնները այդ մեղանշումներուն արգիւնքը կը նկատեն): Բայց Յիսուսի հետ՝ Հրէայ ցեղը կը հնչեցնէ տիեզերական արդա-

րութեան, Ասպուծոյ՝ այսինքն ճշմարտութեան ու կեանքի նորութիւն՝ առջև բոլոր մարդոց հասարակութեան, հաւաքխորհրդային եղբայրութեան ու սիրոյ վերադնել յարողը՝ այս ողին է տհա — «հրէայ ողին», — զոր նոր ժամանակներու հրէայ մեծ մտածողներն ու զրագէտները զարդացուցած են այդ ողին է որ կը խոկայ ու կը արամարանէ Ափինոզային մէջ, կ'երգէ Հայնէին մէջ, կը կազմակերպէ ու կը քննադատէ Մարքսին, Լասալին ու Պրանտէսին մէջ:

Այդ նոյն ողին է, դարաւոր հայածանքներու տակ թզառուած, անարդարութեան բոլոր սլաքներն իր մարմնոյն մինչև խորը երկարօրէն զգացած, ու բացարձակ արդարութեան տպագայ յաղթանակին վրայ իր հաւատքին ատով ա՛լ աւելի զօրեղացէս փարոց եւ այժմ այդ արդարութիւնը մարդկային բոլոր ցեղերուն ու բոլոր անհատներուն համար ցանկացող Հրէութեան այդ ողին է զոր Պերնար Հազար ալ արտայայտեց իր գրական գործին ինչպէս եւ իր հանրային գործունէութեան մէջ:



Հազար մին եղաւ, Բոնիբի, Փոլ Ասանի, Հանրի տը Բենեիէի, Բեմի տը Կուրմոնի, Փան Մորէասի, Վիելէ-Կրիֆինի եւ ուրիշներու հետ, այն նոր գրագէտներէն որոնք, շարունակելով եւ ընդլայնելով ինչ որ հայակապօրէն սկսած էին քանի մը անհատականութիւններու — Վիլիէ-ժըլ'իլ-Ատան, Պարպէ տ'Օրվիլի, Պոտլէր, Վերլէն, Մայարմէ, Լըքոնթ տը Լիլ, — Ֆրանսական ժամանակակից գրականութեան մէջ նոր եւ ուժեղ հոսանք մը ստեղծեցին: Այն պահուն ուր այս խումբը հրապարակ կուգար, վէպին մէջ կը տիրապետէր բնագաշտ դպրոցը. եւ բանաստեղծութեան մէջ «Պառնասեան» դպրոցը. բնագաշտները իրականութեան պաշտամունքը ծայրայեղութեան հասցնելով գեղեցկագիտական սխալի մը մէջ ինկած էին. իրենց գործերը այլեւս մեծ մասամբ «ընդօրինակութիւններ» էին իրականութեան, մինչ արուեստի

գործը պէտք է ըլլայ թարգմանութիւն մը, մեկնութիւն մը, եւ ոչ թէ չոր կազապարուճ տեսնումներ. ամենէն աննշան մանրամասնութիւնները ձանձրանալի տոտոութեամբ մը կը դիզուին այդ վէպերուն մէջ, որով պատկերը կը դառնար յաճախ ազօտ, թանձրակուտակ, գոեհիլ, առանց լուսաորուելու. որոշ ու մեծ գաղափարով մը: «Պառնասեան»ները բովանդակներուն հոգեվարքը կը ներկայացնէին, հոգեվարք մը ուր ձեւին կատարելութեան ու նրբութեան հոգը միայն մնացած էր՝ նոյն իսկ ծայրայեղութեան տարուած, մինչ շունչը որ անհրաժեշտ է ամէն բանաստեղծութեան, հոգեկան մեծ յուզումը առանց որուն ռեւէ գրական գործ՝ որքան ալ սիրուն ձեւով ըլլայ յօրինուած՝ անկենդան է, կը պակսէին: Այդ նորերը վերանորոգեցին ֆրանսական գրականութիւնը: Իրենցմէ ոմանք անուանուեցան անկապաշտ (décadent) որովհետեւ ամենայն անկեղծութեամբ կ'արտայայտէին անկման շրջանի մը այսինքն ծայրագոյն քաղաքացիութեան շափազանց նրբացած ու քիչ մը յողնած ու հիւանդ շրջանի մը, հոգեբանութիւնը. մեծագոյն մասը անուանուեցան խորհրդանշանական (symboliste) որովհետեւ կը ձգակէին — ինչպէս ըրած են արդէն հին ու նոր բոլոր մեծ արուեստագէտները, — իրական կեանքի երեւոյթները սեղմ ու թելագրական խորհրդանշանականութեամբ մը թարգմանել: Աստուցմէ էր Հազար, որ հեքեաթներու, այլաբանական վիպակներու ձեւով հրատարակեց բազմաթիւ էջեր, զոր յետոյ ամփոփեց «Աւանդավէպերու հայելին», «Փղոսկրէ գուռը», եւ «Պահակիւնները» տիտղ սուած կրեք հատորներով, եւ որոնց մէջ արտայայտած է ընկերական, բարոյական, գեղեցկագիտական բոլոր խնդիրներու մասին իր յատուկ աշխարհայեացքը: Ընկերական հարցերու մէջ այդ աշխարհայեացքը շատ լայն է ու խիզախ. ընկերվարականութենէն անդին կ'անցնի, կը հասնի մինչև անխիշտանակականութիւն: Ուրիշ կարգի հարցերու մասին ալ Հազարի մտա-

ծուժը կը յայտնուի միշտ նոյն ազատ, յանգուզն ու այնիւ ձեւովը: Հեքեաթներու, աւանգալէպերու շրջանակը շատ լաւ յարմարած է այդ լայն ու խորունկ մտածուածին արտաքուստ թէպէտ երեւակայական, այդ պատմութիւնները շատ ներոյժ կեանքով մը կենդանի են, առանց երբեք ունենալու պայմանագրական ու պաղ այլաբանութիւններու ակադեմական մեծածութիւնը: Կազար էր Ղը-րէական ծաղմամբ կը գապուէր մեր հրահուրց Սրեւելքին, ուր կեանքը հեքեաթներով թաքցմանեւ արուեստը իր ամենէն մեծ շարգացմանն է հասած, եւ ուր Յրուսու իսկ էր վարդապետութիւնը տարածելու համար առակներու սրբուն ձեւին գրմեց: Եւ ընդ որով Կազար կը հագուեցնէ իր տեսլիքներն ու խոհանքները, արեւելեան հարուստ շնորհն ու վառ պատկերաւորութիւնն ունենալով հանգրձ, փրանսական սեղմութեան, յասակութեան, մուսկալութեան ու սերդաշնակութեան յատկութիւնները ցոյց կուտայ միանգամայն Սոյգ հեքեաթները մեծ մասամբ, մանաւանդ անոնք որ «Ջահակըրին» արագոտուած հատորն մէջ ամփոփուած են, եւ որոնցմէ մէկ քանրին թարգմանութիւնը յաշորգարար պիտի հրատարակենք «Սահար»-ը մէջ, կը բացատրեն աւսէն նախապաշարուած, ամէն մտւածագութենէ մաքրուած յատրետրը յովիւ մը վայրոյժը ընկերական վրթխարի եւ բըւրածու անարգարութեան գէմ, եւ խորին ու արու համոզումը թէ այդ ազգամուղչը ու շարքը բուրգը պիտի ապալի սր մը սրբ առաւարտները իրենց իրաւունքին եւ իրենց ուժին գրտակրց՝ վըճարար մզին մեծ պայքարը:

Ինքնատիպ էջերով իր գրական ըմբռնումը մարմնաւորելէ զատ, Կազար զայն բացատրեց նաև քննադատական գրուածքներով, որոնց մէջ հարուածեց նախորդ սերունդի գրողներէն անոնք, որ թէպէտ փառքի ու համբաւի արայցած, ըստ իրեն՝ անարժան էին այն համբաւին զոր կը վայելէին: Իր այդ կարգի գրուածքներուն ամենէն ուշադրան է այն

շարքը զոր հրատարակեց «Միկարո»-ի մէջ «Երէկուաններն ու այսօրուանները» համատիրութիւնը, եւ զոր յետոյ ամփոփեց «Փամանակակից գէմքեր» վերնագրով հատորի մը մէջ: Տոտէ, Րիչիէն, Մենտէս, Սիլվեսթր, Գրիւնթիէր, Լըմէթր, Պուրթէ, Փայերրոն, Լ. Հալելի. Մ. Փրելիօ, եւ նոյն իսկ Զուլա եւ Ա. Ֆրանս, բոլոր «յաջողած»ները, կ'ենթարկուէին իր կիռու եւ անողորմ քննադատութեանը, մինչ շիւղմանս, Րոնի, Լորէն, Շըվասիւ, Փ. Հերվիէօ, Ռոսենպաք, Փ. Ատան, Միրպօ, Թայեատ, Վերլէն, Մալարմէ, Մեթերլինք, որոնք այդ միջոցին երիտասարդ գրագէտներու եւ դրահմուտներու սահմանափակ շրջանակի մը մէջ միայն ծանօթ էին՝ հակառակ իրենց խորունկ արժանիքին, Կազարի էջերուն մէջ կը գտնէին խանդալատ ու արդարադատ գնահատում մը: Այդ հակիրճ ու բուրգիծներու շարքը, որոնց մէջ կը տիրէ յանգուզն, անշահախնդիր, անկեղծ ոգի մը, ինքնատիպ, նուրբ հմուտ եւ ազատ զեղեցկագիտական ճաշակ մը, արտայայտուած՝ ջղուտ, պատկերայից, ուժեղ ու սայրայսուր ոճով մը, փրանսական քննադատութեան ամենէն տոկուն գործերէն մէկն է, եւ եթէ անոր մէջ յայտնուած դատումներէն ոմանք — շատ փոքր մաս մը — կրնան այսօր վիճելի նկատուիլ, հեղինակին անկեղծութիւնը եւ տաղանդը միշտ անվիճելի կը մնան:

Պրակտիկ այդ գործունէութիւնը պիտի բաւէր անկորուստ պահելու Կազարի անունը. բայց Կազար չէ շատացած զուտ մտաւորական կեանքի սը մէջ իր ուժերն արտայայտելով, ուզած է նաև իր սկզբունքներուն իրականացմանը նպաստել՝ հանրային պայքարին անձնակէս մասնակցելով:

Կազար գործած է նախ՝ իբր հրապարարակագիր. Entretiens politiques et littéraires հանդէսին մէջ զոր հիմնեցին Փօլ Ատան, Հանրիտը Րենիէի եւ Լ. Ֆրանսի վիլէ կրիֆին եւ յետոյ «Էքօ ար Փարի»-ին մէջ, հրատարակած է շարք մը յօդուածներ ընկերական հարցերու

մասին յօդուածներ առանց խորհրդանշանի , որոնց բուն նպատակն էր ուղղակի եւ անմիջապէս օգրել ժողովրդին վրայ . ջնջել անոր նախապաշարութիւնը , պատրաստել զայն պայտարին : 1896ին , Լազար պահ մը նոյն իսկ զազափարն ունեցաւ առանձին թերթ մը հիմնելու L'Ere Nouvelle տիտղոսով . իր նախարան-յօդուածին մէջ , — հիանալի յօդուած մը , — կը բացատրէր այն տխուր կացութիւնը ուր ինկած է ֆրանսական մտմուլը մեծ մասամբ , այլեւս չազդիտական ձեռնարկ մը դարձած՝ ամէն տեսակ միջոցներով դրամ վաւելելու ջանացող , առանց ժողովրդին բարոյական բարձրացման նպատակու . ճշմարտութեան քարոզիչ ու պաշտպան հանդիսանալու լուրջ մտահոգութեան . գրագէտները , որոնք իրենց ազնիւ տաղանդին փայլը այդ ատեւարական շիւ տուներուն մէջ կը բերեն ի տես զնեւ , ապամայ մեղսակցած կ'ըլլան ինկած լրագրութեան մը կատարած օգեղ եւ երբեմն ոճրագործ արարքներուն : Լազար կ'առաջարկէր որ գրագէտները , ճշմարիտ գրագէտները , փոխանակ լրագրութեան գլուխը գտնուող խանութպաններէն չազատուելու . իրենք իրենց մէջ միանան եւ հիմնեն թերթ մը որու տնօրէնութիւնն ու խմբագրութիւնը ամբողջապէս ու միմիայն մտաւորականներու ձեռքն ըլլայ . որպէսզի ճշմարտութեան ու գեղեցկութեան ծառայելէն ուրիշ նպատակ չունենայ անիկա : Ընդճը չէր հաշուած թէ արդի ընկերակաւն պայմաններուն մէջ՝ ամենէն ազնիւ նպատակներն անգամ դրամի պէտք ունին իրականանալու համար , եւ ինք ուրիշ բան չունէր բայց եթէ իր խանդն ու հաւատքը . ոչ մէկ գրագէտ , — բաց ի Փոլ Ատանէն որ դէթ մէկ յօդուած մտուած էր , — չաչխատակցեցաւ այդ թերթին . նոյն իսկ անոնք որ ընկերական անարդարութեանց դէմ իրենց գրուածներով ծանօթ են , բան մը չըրին աջակցելու համար այդ ազուր ծրագրին յաջողմանը . կը յիշեմ տեսակցութիւն մը զոր այդ օրերն իսկ ունեցայ Լազարի հետ . քանի մը ամիս էր որ Փարիզ էի հասած ,

ջարդերուն շրջանն էր . կը փափայլէի մեր գատին նուիրուած յօդուածներ հրատարակել փարիզեան թերթերու մէջ . գիմեցի Լազարին . խնդրելով որ իր նորահաստատ թերթին մէջ տեղ մը տայ հայկական խնդրոյն նուիրուած յօդուածներու շարքի մը : Լազար — յազթահասակ ու գեղեցիկ մաշդ մը , կորովի զէմբի մը վրայ շատ քաղցր ու գորովոտ աչքերով . — ամենասիրալիք ընդունելութիւն բրաւ առաջարկիս : Իր փափաքն արդէն ինչպէս յայտնեց , բոլոր կեղերուածներու , ճնշուածներու , տառապողներու դատերուն օրկանը դարձնել էր իր թերթը . իր եզրայրակիցներուն ընթացքը զանազանացած էր . բայց վհատած չէր . կը կարծէր թէ հակառակ ամէն յանի պիտի կարենար իր ծրագիրը յաջողցնել : Աւաղ , յօդուածս հազիւ սուարուած էի , երբ Բուսցայ որ թերթը զազրած էր արդէն :

Ամենամեծ , ամենակարեւոր դերը , սակայն , զոր Լազար կատարեց՝ իբր «գործիչ» Տրէյ-ֆիւսի խնդրոյն մէջ իր մասնակցութիւնը եղաւ : Մինչեւ այդ վայրկեանը Լազար իր հանրային գործունէութեան մէջ աշխարհաքաղաքացի մը մտայնութիւնը ցոյց տուած էր , ազգի , կրօնքի , ցեղի խտրութիւններուն մոլեղնարար թշնամի , ինքզինքը զգալով ամէն բանէ առաջ՝ մարդ մը , որուն նմաններն ու եզրայրներն են «բոլոր» մարդիկ : Նոյն իսկ իր հոյակապ ուսումնասիրութիւնը , «Հակասեմականութիւնը , իր պատմութիւնն ու պատճառները» , թէպէտեւ արդէն իսկ ցոյց կուտայ իր շատ բնական մտահոգութիւնը մարդկային շատ մը անարդարութեանց մէջէն մասնաւորապէս ի վեր հանելու իրեն հետ արիւնով կապուած մարդերու խումբի մը դէմ դարերէ ի վեր գործուած եւ արտասովոր ծայրայեղութիւններու հասած անարդարութիւն մը , բայց այդ ուսումնասիրութիւնն իսկ ու եւ է կողմնակալութիւն չի պարունակեր , ցեղական մոլեղնանդութեան ու եւ է հետք ցոյց չի տար , անաչառ պատկեր մըն է՝ ստուգուած իրողութիւններու վրայ հաստատուած , թերուզէմ բո-

լոր փաստերը պարկեշտորէն ցուցադրող . կը զգացուի որ առանց Հրէայ ըլլալու , ո եւ է ազնիւ եւ ազատ մտքով մարդ աղբակէս պիտի գրէր ո եւ է հալածուած ցեղի մասին , որքան ալ իր ցեղէն տարբեր ու հեռաւոր ըլլար ան : Տրէյֆիւսեան ինդրոյն մէջ իր միջամտութեամբը կարգար անգամ մը եւս ապացուցուց թէ՛ իր մշտական հաւատարմութիւնը աշխարհաքաղաքացիական տեսութիւններուն եւ թէ՛ իր արիւնի եղբայրներուն մասնաւոր ցաւերուն նկատմամբ իր անտարբեր չըլլալը : Տրէյֆիւսեան հարցը ձեռք առաւ , ոչ թէ միմիայն որովհետեւ անմեղ ցեղակցի մը դատն էր որ պիտի պաշտպանէր , այլ նաեւ որովհետեւ համոզուած էր թէ ո եւ է անիրաւութեան զէմ պայքարը՝ բոլոր անիրաւութեանց զէմ մղուած կոիււին յաջողմանը կը նպաստէ միշտ : Այդ խնդրոյն մէջ մասնաւանդ , Տրէյֆիւսի պատուումը , անոր անմեղութեան հաստատումը՝ դատապարտութիւնը պիտի ըլլար կարգ մը յանցապարս բարձրաստիճան անձնաւորութեանց , եւ կարգար ատով զործնականապէս սպացուցած պիտի ըլլար ինչ որ հեքեաթներով ու յօդուածներով քարոզած էր երկայն ատենէ ի վեր : Իր մասնակցութիւնը այդ աշխարհահոշակ խնդրոյն մէջ՝ ահագին է : Կարելի է ըսել թէ ինչոյն իսկ ստեղծեց զայն , ու մինչեւ վերջը , թէ կէտ մութին մէջ , ինքը վարեց զայն : Հարցին մեծաշառաչ պայթիւնէն շատ ատաջ , քանի մը գրքոյկներ հրատարակեց , կուռ արամարանութեամբ մը շարագրուած , եւ դեռ սակաւաթիւ բայց արդէն իսկ ու մեղ կասկածներ յարուցանող փաստերով լեցուն : Յետոյ գնաց մէկիկ մէկիկ դիմել բազմաթիւ նշանաւոր Ֆրանսացիներու՝ խնդրելով որ հարցը ձեռք առնեն եւ իրենց հեղինակութեան բոլոր ուժովը պաշտպանեն անմեղի մը դատը . գրեթէ բոլորն ալ նախ մերժեցին զբաղիլ այդպիսի կնճոտ ու վտանգաւոր ինչորով մը . Շէօրէրֆէսթընէր եղաւ առաջինը որ համոզուեցաւ եւ իր ամենամաքուր նկարագրին բովանդակ անկեղծութեամբը առաջին աղմկայոյզ ազդակն

արձակեց ի նպաստ անմեղին . քիչ յետոյ , Ջոյա որուն նմանապէս դիմած էր՝ նկատի առնելով անոր տիեզերական համբաւը , ազնուաբար մոռնալով որ կարգար իր «Ժամանակակիցներ»ու շարքին մէջ զինքը «երէկուաններ»ուն կարգը դասած էր , որոշեց իր մեծ ձայնը լսելի ընել ի նպաստ Տրէյֆիւսի , եւ ինչ որ պատահեցաւ այնուհետեւ՝ ամենուն ծանօթ է : Այլ անկից յետոյ , կարգար կամաւորապէս ստուերի մէջ պահեց ինքզինքը , թողլով որ իրմէ աւելի նշանաւոր ու աւելի ազդեցիկ անձնաւորութիւններ վարեն պայքարը , որովհետեւ ինքը այդ խնդրէն ո՛չ փառք կը սպասէր , ո՛չ անձնական ո եւ է օգուտ , այլ միայն ազնիւ գործի մը նախաձեռնակը եղած ըլլալու գուհունակութիւնը : Պայքարը առաւ դիւցապներդական համեմատութիւններ , որոնք Տրէյֆիւսեան մարտիկներուն մեծ մասին նախապէս յուսացածէն շատ աւելի լայն ու կարեւոր ուրորտի մը մէջ փոխադրեցին զայն . կուր՝ իր վերջին շրջանին մէջ՝ այլ եւս անձի մը շուրջը չէր որ կը դառնար . այլ եղած էր վճռական պայքարը հին ու պահպանողական Ֆրանսային ու նոր , ճշմարտապէս ուսմկավարական Ֆրանսային միջեւ : Տրէյֆիւսի անձնական գտտը իր բուն լուծումը չգտաւ , այն վերջնական եւ որոշ լուծումը զոր կը ցանկային արգարութեան եւ ճշմարտութեան բարեկամները . բայց միւս , մեծ պայքարին մէջ , արդարութեան ջոկատը յաղթանակեց . Անցեալին կուսակցութիւնը արմատապէս ջախջախուեցաւ Ապպային կուսակցութեանէն , եւ այսօր՝ շնորհի Տրէյֆիւսեան տաղնապին՝ Հանրապետութիւնը այլեւս հիմնապէս արմատացած է Ֆրանսայի մէջ , ճշմարտապէս ուսմկավարական նկարագիր է ստացած , եւ փոխանակ այլեւայլ կուսակցութիւններու միջեւ մշտապէս պառակտուած մնալու , Ֆրանսա ունի այսօր հզոր կուսակցութիւն մը , հանրապետականը , որ երկընկնած եւ Մեծ Յեղափոխութեան ճամբուն մէջ վերստին դրած է այս սողովուրդը որ

այլևս այլ աղնիւ ու լայն ճամբէն պիտի յա-
 աջանայ զէպ ի հետդհետէ աւելի պայծառ ու
 զհզեցիկ հորիզոններս : Մարդկութիւնը Լա-
 զարին կը պարտի ֆրանսական ժամանակակից
 պատմութեան այդ մեծ դրուագը , որուն հե-
 տեանքները անհուն եղան ու անհունապէս
 բարերար : եւ ատի Լազարի մեծագոյն փառքի
 տիաղոսը կը կազմէ :

Անձնութիւնն ու կորովը զոր Լազար
 ցոյց տուած էր Տրէյֆիւսի խնդրոյն մէջ , իր ա-
 բնակիցներուն , մանաւանդ կարգ մը հրէատե-
 եաց երկիրներու մէջ տառապող ցեղակիցնե-
 րուն հիացու մը , երախտագիտութիւնը հրաւի-
 րեցին իր վրայ , ինչպէս եւ անոնց աղաչաւոր
 հրաւերը իրենց բոլորին դատր ստանձնելու :
 Լազար խուլ չմնաց զժբաղղներու կոչին : Գը-
 նաց Ռումանիա , այնտեղի Հրէաներուն տառա-
 պագին կացութիւնը մօտէն ուսումնասիրեց ,
 սւ Փարիզ դարձին անոնց կրած նեղութիւն-
 ներուն վրայ գրքոյկ մը հրատարակեց : Մաս-
 դիր էր ուրիշ երկիրներու մէջ տառապող Հը-
 րէաներու ալ կացութեամբն զբաղիլ , բայց
 մահը վրայ եկաւ , — անակնկալ ու վաղամամ
 մահ մը որ ջնջեց ամբողջ մարդկութեան գես
 երկար ատեն օդտակար ըլլալու սահմանուած
 գոյութիւն մը :

Լազար մինչեւ վերջը հաւատարիմ մնաց իր
 սկզբունքներուն , Հրէաները կը պաշտպանէր
 ամէն բանէ առաջ որովհետեւ անիրաւուածներ
 ու հալածուածներ են , եւ անոնց պաշտպա-
 նութեանը ինքզինքը նուիրելով հանդերձ , եր-
 բեք անոնց ի նպաստ չըբաւ բան մը որ ու-
 րիշ կեղեքեալներու վնասաբեր կարենար ըլ-
 լալ . եւ արդէն աւիթ չփախցուց ապացուցա-
 նելու համար թէ իր սիրտը բաց էր բոլոր
 ցաւերուն համար , ուրկից ալ գան անոնք :
 Պրիւսէիի հայասիրական համաժողովին , — որ
 գումարուեցաւ տարի մը առաջ , — ինք ալ գը-
 նաց՝ Քիչարի , Փրէսանսէի , Ժորէսի հետ՝ հարըս-
 տահարուած ժողովրդի մը կացութիւնը բար-
 ւոքելու համար եղած ջանքերուն աջակցելու :

«Չունակիր» մըն էր ինք ալ , ինչպէս կ'ըսէ
 Քիչար իր բնկերոջ յիշատակին նուիրած գե-
 ղեցիկ յօդուածին մէջ : Արի ու աղնիւ բու-
 ղուկը որ այնքան խորխտարար վեր կը բռնէր
 իր ջանը՝ մարդկային ազջամուղջին վերեւ ,
 փշրուած է այսօր Մահուան կոյր դարչապարին
 տակ . բայց լոյսը որ այդ ջանէն արձակուե-
 ցաւ՝ չպիտի կորսուի :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՆԱՆ

ՅՈՒՔԸ

Պիչերին մէջ երկինքն հեռուն
 կարմրեցաւ յեղակարծ .
 Եւ նայուածքներն անցորդներուն
 Հոն յսոհցան ըզմայլա՞ :

Վեհ էր պատկերն ու մեծափառ ,
 Չոր սեւ խորքին վրայ մութին
 Աներեւոյթ ձեռք մը ճարտար
 կը նըկարէր հըբաշային :

Միրանին վառ ու յաղթական
 Հոն կ'անուշնար մանիչակի
 Նուրբ փոշիով մ'օգածածան
 Ու ցոլքերով ալ՝ ծաթ , ոսկի :

«Ի՛նչ հոյակապ լուսնի ծագում . —
 կը գօչէին հիացաբար
 Անցորդներն , — ա՛խ , ի՛նչ անպատում
 Հրավատութիւն ակնապարար :

«Կամ Հիւսիսայց մը գուցէ նոր ,
 կամ հին Աստուած մ'որ կ'վերածնի՝
 Լոյս երկունքով մը փառաւոր՝
 Մեծ համբոյրէն երկրի՝ ւ երկնի :»

Եւ ան հրդեհ մըն էր անկղ
 Որ հոն հեռուն զժբաղղ գիւղեր

Իր ժանտ չունչին տակ բոցանեղ
Կը հայեցնէր ու կը թաղէր :

Եւ չքերը որ ըսքանչազին
Կը յառին վառ պատկերներուն
Ուր մեծ յերթող մ'իր հոգիին
Հոսեցուցեր է լոյսն համբուն :

Կ'անգիտանան յաճախ թ'աղւոր
Այդ լոյսը՝ ցոլքն է հրդեհին
Որով վայրագ ծաւերը խոր
Կը մաշեցնեն անոր հոգին :

ՏԵՐՎԻՇ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԸ

Եռյամբեր ՉԻ իրիկունը, հարիւր յիսունի
չափ գրագէտներ, արուեստագէտներ եւ արու-
եստասէրներ՝ ամէն ազգէ՝ հաւաքուեցան Սո-
սիէթէ Սափանթի ճաշարանը, «Լա Փլիւմ» գը-
րական հանդէսին գործունէութեան տանեւ
հնգամեակը սօսելու համար : Երեկոյթին, որ
կազմակերպուած էր հանդէսին այժմեան
անօրէն Պ. Գարլ Պօէսի նախաձեռնութեամբ,
կը նախադասէին Ռոտէն արձանագործն եւ Փոլ
Ատան : «Լա Փլիւմ», «Մեռքիւն տը Պրանս»-ի,
«Մըվիւ Պլանչ»-ի եւ ուրիշ քանի մը հանդէս-
ներու հետ, որկանը եղած է ֆրանսական «Նո-
րագոյն» գեղեցկագիտական ձգտումներուն :

Անահիտ»-ի անօրէնը, որ հրաւիրուած էր
մասնակցելու այդ հացկերոյթին, արտասա-
նեց բաժակաճառ մը. որուն թարգմանութիւնը
կը հրատարակենք ստորեւ :

Տիկիններ, պարօններ,

Շնորհակալ եմ Պ. Գարլ Պօէսին՝ հաճած ըլ-
լալուն համար զիս հրաւիրել այս հացկերոյ-
թին ուր մտաւորականներու խումբ մը հա-
ւաքուած է այս իրիկուն օսելու գեղեցկա-
գիտական արի ճիգը զոր տասնեւհինգ տարիէ
ի վեր պարզած է «Լա Փլիւմ»ը : Այդ թերթը

«Մերքիւն տը Պրանսին» եւ ուրիշ քանի մը
պարբերականներու հետ, նպաստած է ֆրան-
սական արուեստին նոր ու հիւանալի մէկ փու-
լին զարգացմանն ու յաղթանակին : Պրանսայի
մտաւորական կեանքին երեւոյթները բովան-
դակ խորհող մարդկութեան վրայ կը ճառա-
գայթեն ու ամենաբարձր կարեւորութիւն ու-
նեցող դէպքեր կը կազմեն : Եւ յաւաքհա ամէն
մասերուն մէջ : Գեղեցկութեան ծարաւ բոլոր
մտքերուն համար Վերջին յառորդ դարու ֆը-
րանսական մտածման ազնիւ, հզօր ու ա՛յն-
քան ճոխ ճաղկեւորումը մին է մտաւորական
ամենէն թանկագին գանձերէն որով մարդկու-
թիւնը կարենայ պարծիլ : Հայ գրականու-
թիւնը անոր խորին հրապոյրն ու բեղմնաւոր
ազդեցութիւնը կրած է, ինչպէս եւ օգտուած
էր ֆրանսական մտածման նախորդ փուլերէն :
Շատ քաղցր պարտականութիւն մըն է ուրեմն
որ կը կատարեմ այս իրիկուն՝ յայտնելով այս-
տեղ հայ մտաւորականներուն երախտագի-
տութիւնը այն ամէն բանին համար զոր կը
պարտին ֆրանսական մտքին փառաւոր գործին
ընդհանրապէս, եւ վերջին շրջանին հոյակապ
փթ թու մին մասնաւորապէս :

Բայց այս հաւաքումը ինձի կը թուի ունե-
նայ աւելի բարձր նշանակութիւն մըն ալ :
Ինձի կը թուի թէ գեղեցկագիտական որոշ
ճիգ մը տօնելով, այս սեղ խմբուած կոչնական-
ները կը փառաբանեն միեւնոյն աստիճանին
ինքն իսկութիւնը Արուեստին, այն աստուա-
ծային յատկութիւնը զոր մարդն ունի Գե-
ղեցկութիւն ստեղծելու : Եւ ոչինչ աւելի վե-
հաչուք է քան այսպիսի հանդէս մը : Ոչինչ
նաեւ աւելի միսթարիչ, աւելի կազդուրիչ է,
անոնց համար որոնք կը տառապին հրէշային
տղեղութիւններէն, վայրենի անգթութենէն
կեանքին՝ այնպէս ինչպէս մարդկային անդի-
տակից մեծամասնութեան ապուշութիւնը կա-
յացուցած է զայն : Մեծ սփոփանք մըն է՝ հաս-
տատել անգամ մը եւս, ու հանգիսաւոր կեր-
պով մը, թէ մարդկային ամբոխին անհուն ու
զազրատեսիլ ծովին վերեւ, ուր կը տի-
րապետին անասնական Բրտութիւն ու Ան-
արբարութիւնը : Կը ցցուի խրոխտ ու մա-
քուր փարոսը ազատ, գիտակից ու գեղեցիկ
Մտածումին, այդ փարոսը զոր կառուցած են
հանճարը, տառապանքն ու գիւցազնական ե-
րազը ընարեալներուն, այսինքն ճշմարիտ


մարդերուն : Գեղեցկութեան , ազնուութեան , բարձր քաջութեան այդ յիշատակարանը պիտի հասնի օր մէ իրականացնելու զըսողաշտական վսեմ խորհրդանշանը , որուն համեմատութիւնն , Չարի Աստուածը , ժամանակներու կատարած ին՝ պիտի ընկղուզուի , ինքն իսկ բարերար լոյսի փոխուած , Բարութեան եւ Գեղեցկութեան Աստուծոյն՝ Որմիզդին՝ մաքուր պայծառութեանը մէջ : Այդ փարօսը վերջ ի վերջոյ պիտի հալեցնէ իրմէ զուրս արձակուած վեհանձն լոյսին մէջ՝ այն արիւնտ աղջամուզները որոնց մէջ մարդկային ողորմելի կոհակները դեռ այսօր իրարու կը բազխին եւ պարար կը պատուեն :

Ապրի՛ Արուեստը , գերագոյն պատիւը , ապաստանն ու ինչքը մարդկութեան :

—Chants populaires arméniens գրքին վրայ l'Européenը , իր վերջին թիւերէն մէկուն մէջ , հրատարակած է ընդարձակ յօդուած մը՝ Պ. Փոլ Արման Հիրչի կողմէ գրուած :

Նոյն գրքին վրայ Վիեննայի թերթերէն մին , Wiener Abendpost , հրատարակած է յօդուած մը իր 22 օգոստոսի թիւին մէջ :

Տանիմարքական ամսագիր մը . Dansk Tidsskrift , իր նոյեմբերի թիւին մէջ հրատարակած է թարգմանութիւնը Քամառ Քաթիպայի «Արաքսի արտասուք»ին . Նայրանդեանի «Աղառն Աստուած»ին եւ Ա. Չ. ի «Օրօր»ին .



ԳՐԲԵՐ



Ս. Էջլիածիւն , 303-1903 . — Առ Նորին Վեհափառութիւն ՏՏ. Մկրտիչ Ա. , ծայրագոյն պարարք եւ կաթողիկոս ամենայն Հայոց , մեծարանօք նուիրի ի Հարց Մխիթարեանց Վե-

նետկոյ . — «Աղգային մեծ յորեկանն , կ'ըսէ նախարանին մէջ՝ գրքին հեղինակը Հ. Ս. Էջլիկեան , Գրիգորաշէն եւ Տրդատաշէն տաճարի հազարվեցհարիւրամեայ հիմնարկութիւնն , մեզ առիթ տուաւ . Ս Էջմիածնի նկարագրութիւնն առանձին հատորիկով նուիրել նոյն տաճարի հայրապետական գահուն վրայ տասր տարիներէ ի վեր բազմող ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՍ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ , Այս մեր փոքրիկ աշխատութիւնն , ըստ կարեւորին կատարեալ բնելու համար՝ աչքի առաջ ունեցած ենք ցարդ Ս . Էջլմիածնի վրայ հրատարակուած գրութիւնք : Մեծայն յս ենք որ հատորիկս հաճելի պիտի անցնի , ոչ միայն նորին Վեհափառութեան այլ եւ ի սփիւռս աշխարհի ցրուած ամէն Հայոց . »

Հոյակապօրէն տպագրուած , գեղեցիկ պատկերներով զարդարուած , այս գիրքը կ'ուրուագծէ Էջմիածնայ ալեւոր տաճարին պատմութիւնը , բազմաթիւ շահեկան տեղեկութիւններ կուտայ անոր ձեւափոխութեանց եւ անոր յարակից իրողութեանց , ինչպէս եւ տաճարն ու վանքին մէջ գտնուած զեզարուեստական առարկաներուն , հնութիւններուն , քանդակներուն , զեղանիւս շուրջառներուն վրայ , եւն : Այն զուտ ազգային զգացումը , որով զաւանական մասնաորութեանց ամէն տեսակ մտահոգութիւններ մոռնալով , Վենետիկ վանքը այդ մեծարանքի հարկը կը մոտուցանէ Հայոց նուիրական սրբավայրին , արարք մըն է ամէն գովեստ վեր եւ անհունապէս պատուարեր Ս . Ղազարու Միաբանութեան :

Le Rythme tonique dans la poésie liturgique et dans le chant des églises chrétiennes au Moyen Age, par Pierre Aubry . — Մանօթ հալապէտ երաժշտապետ Պ Փիէր Օպրի , այս շատ գեղեցիկ աշխատութեան մէջ ուսումնասիրած է երաժշտական եւ սաղաշափական կարեւոր հարցեր՝ հայ յոյն եւ լատին եկեղեցական երգեցողութեանց հաւասարապէս պատկանող : Այդ մազիստրական աշխատութեան մասին , ցաջորդ թիւով մը՝ պիտի խօսինք աւելի մանրամասնօրէն : Առայժմ կը շատանանք զայն յանձնարարելով երաժշտական գիտութեամբ պարապող ու մասնաւորապէս մեր եկեղեցական երաժշտութեան պատմութեամբ հետաքրքրուող բոլոր Հայերուն :

Է. Ակնունդի Կողմանէն վերհետ . — Հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, ժընեւ . — Այս գիրքը որ նախ մաս առ մաս, «Կովկասեան խաղրիկներ» տիպոգրուած թղթակցութեանց ձեռով՝ հրատարակուեցաւ «Դրօշակ»ի մէջ, աւանդէն շահեկան եւ ամենէն գեղեցիկ գործերէն մէկն է ու վերջերս լոյս տեսած ըլլան, ու հրատարակ կու գայ ճիշդ վայրկեանին, քանի որ իր նիւթն է պատմութիւնը այն բոլոր յաջորդական որոշումներուն ու արարքներուն որով ռուս կառավարութիւնը կը ձգտի ասանկ մը ի վեր կովկասի Հայութիւնը հալեցնել ռուսական քուրային մէջ, Տոքիւմաններու իրողութեանց հարուստ ու ամուր պաշարի մը վրայ հիմնուած, տաք ու ազնիւ զգացմամբ մը տողորուած, կարուկ եւ կենդանի ոճով մը շարադրուած, այդ գիրքը խորին յուզում մը յատաջ կը բերէ ընթերցողին մէջ, Ամէն հայ պէտք է կարգայ դայն :

ՄԽՕ. ՇԱՀԷՆ . — (Կենսագրական նոթեր), Կրեց Արսէն Տիրան . — Այս անհունապէս սըրաւաշարժ ու գեղեցիկ գրքոյկին վրայ, վոր վերջին պահուն ստացանք, պիտի խօսինք մեր յառաջիկայ թիւով :



ԱՒԵՏՈՂԸ

Ձորակ մըն էր աւերակերպ ու թաղծատեսիլ, ձորակ մը ուղղանկիւնի, ամէն դիէն գոցուած, բանտ մ'ահարկու. եւ քստմնելի, Երեք կողմէն՝ կը ցցուէին վիթխարի լեռներ որոնց կատարներն այնքան բարձր էին որ կարճես իրարու կը զպէին, լեռներ՝ կարծր վայրերն կրանխտով մը շինուած, որուն վրայ երբեք ոչ ծառ, ոչ ծաղիկ, ոչ դալարիք էր բուսած, այլ միայն՝ սորերուն մէջ՝ թանձր ու մութ մամուռ մը : Գալով շորրորդ կողմին՝ որ ամենէն նեղն էր,

ան կը կաղմուէր հրէշաւոր շէնքէ մը՝ կիկուպի մը ձեռքով լեռներէն փրցուած ժայռերով կառուցուած . շէնք մը տարօրինակ, սարսափազդեցիկ, անբացատրելի, տեսակ մը յայտնութեանական անասուն, որ տաճար մը, աշխարհակալի պալատ մը, իրաւաքննութեանց առասպելական որջ մըն էր, դատաստանատուն, զօրանոց եւ եկեղեցի՝ միանգամայն . յանդուգն յիշատակարան մը, գեանափոր դամբարաններէ, խորունկ սրահներէ բաղկացած, իր վերեւն ունենալով հսկայ աշտարակներ որոնք սարերն ի վեր կը մազլցէին եւ անոնց գագաթը կը հասնէին . պակուցիչ մղջաւանջ մը, որ իր արհաւիրքները կը ծանրացնէր ձորակին բնակիչներուն հոգւոյն վրայ :

Ձորակը բնակիչներ ունէր : Հոն կը բնակէին խեղճ տխուր էակներ, տխեղճ եւ ճոզած, լուսագուրկ ծաղիկներու պէս՝ տժգոյն, որովհետեւ ապահ լեռները չէին թողուր որ արեւի ոչ մէկ ճառագայթ մինչեւ ամուլ հողը թափանցէր : Ուստի այդ մարդիկը կ'ապրէին անբատոյգ ու տարտամ շողերու մէջ, մշտնջենական վերջալոյսի մը եւ անասող գիշերի մը ծոցը : Իրենց ուսերը կամարացած էին, կուրծքերնին խոռոչացած ու վտիտ . երբեք մաքուր օդ մը ծծած չէին . եւ իրենց լսելիքը մենութեան մէջ սրուած ըլլալով՝ բարձունքներուն վրայէն ոռնալով անցնող հովերուն . աղաղակը լսելու ցաւը կը ճանչնային : Միակ ձայնն էր այդ, որ իրենց ուղեղը անորոշ տենչերով կը լեցնէր . երբեմն մտիկ կ'ընէին զայն՝ հեծկլտալով . այն պահուն ուր մինչեւ իրենց հասնող տարտամ նշոյլները կ'անհետանային՝ զիրենք անաբեկիչ աղջամուղջին մէջ ընկողմած թողլով :

Թաղձագին կեանք մը կ'անցընէին այսպէս, արտասոցստուերն՝ քու նման . եւ ո՛ր կողմ ալ զարձընէին վարժութիւնէն լայնցած բիւրերնին, զարհուրելի պարիսպները կը տեսնէին : Նիհար եւ ուրուածեւ հօտեր կ'արածէին անարիւն մարգերու վրայ զոր ոչ մէկ ծաղիկ կը պնէր, եւ, իրենց սրտնեղութիւնն ամոքելու համար՝ իրենց գառնուկներուն ու երինջնեւրուն վիզը կախած էին արծաթէ զանգակիկներ, — մետաղ մը որ առատօրէն կը գտնուէր այդ

զարգացող ժայռերուն մէջ, — եւ ձորակը կը լեցնէր քաղցրորէն սուր, յստակօրէն մեղամաղձիկ ներգաշնակելով եամբ մը, որ իրենց կրօնները յոյսերն ու բաղձունքները կը քննարկէր :

Սակայն երկտասարդներուն մէջ կային ծանծարեթէ բռնուողներ : Ատոնք կը զզուէին արտերու մէջ աշխատանքին, ապաստին կողերուն մէջ փորուած ներքնուղիներու խորը երթալ քրայանի թեր հանելէն կը դանկին, աւաններու փողոցակներէն կը հեռանային, բարձր գունդերուն առջեւ կը նստէին ու կը հեծկըլտային, իրենց արցունքներուն մէջ՝ զարման մը խնդրելով իրենց ցաւին ու իրենց խոնջէնքին :

Արդ, պայտաին մէջ կը բնակէին. — եւ հնուց ի վեր այդպէս էր եղած, — երեք մարդիկ, որոնք կ'ըսէին, խորհուրդներուն բանային ձեռքերնուն մէջ ունէին Անհամար դարերէ ի վեր կը տիրապետէին այդ աւերակերպ աշխարհին վրայ Անոնց կը յանձնուէին՝ իրր հարկ՝ ժյատ հողին լաւագոյն պտուղները, ընտրելագոյն արջառը, ամենէն յստակ եւ ամենէն հնչուն արծաթը : Անոնք իրր պաշտպաններ, գրեթէ իրր Աստուածներ կը նկատուէին կը պատմէին թէ անոնց հմտութեանը, ճարտիկութեանը եւ ուժին շնորհիւ էր միայն որ ձորակը չէր քայքայուեր ու կը կարծէին թէ իրենց բնակարանին անարկու գանդուածը կ'արգիլէր խրոնվայոյզ լեռներուն իրար միանալն ու ճղճիմ քաղաքները ճզմելը : Պատկառանք, յարգանք, ու վախ կը ներշնչէին անոնք : իրենցմէ երկուքը սեւ պատմուճաններ կը հագնէին, երրորդը պերճաշուք կարմիր զգեստներ կը կըրէր : Երբ կ'երեւային ամբոխին, — ինքզինքնին միշտ ցոյց չէին տար, — առաջինը ձեռքը կը բռնէր կշիռք մը անեղօրէն սրուած լծակով, երկրորդը՝ գիրք մը զոր սովոր էին գալ պատել, եւ երրորդը կը ճօճէր սուսեր մը որուն պողպատը կը դողդղացնէր գունաթափ ժողովուրդը :

Երբ յուսահատները կուգային հեծել ատոնց զրան առջեւ, այդ երեքը՝ կարգաւ կը խօսէին իրենց, Առաջինը իրենց ցոյց կուտար ձորակին մէջ գանուած ճամբաները, կ'ըսէր թէ ոչ

այդպէս էր հեռանալ անոնցմէ եւ թէ գործուած յանդանքները կը կշռուէին նուիրական կշիռքին, արդար կշիռքին մէջ, որ ստեղծուած էր կարգը՝ հետեւ արար երջանկութիւնը պահպանելու համար : Երկրորդը իրենց կը կարգար քանի մը վճռածու խրատներ որոնք կ'ըսէին՝ մտիթարողական ատանձնագորութիւն մ'ունէին, կը բացատրէր թէ իրենց տրամութիւնը աննպատակ էր եւ անտեղի թէ մարդիկ միշտ վերջապետելով մէջ ապրած էին, թէ գրտցած էին հոն իրար սիրել ու մտնել, այլուր՝ նոր ու վերերկնային աշխարհի մը մէջ գանկու համար հրաշափառ տրու մը շրջադաստութիւն մը, որուն զիտնալու էր արժանանալ իր ձայնը՝ ասոնք բռնած ատեն՝ աւելի քաղցր ու տիրական կ'ըլլար, եւ պատանիներուն կը հրամայէր որ հայրենի յարկը դատնան : Գալով կարմրագետ մարդուն ան երեք չէր խօսեր, կը նայէր երկտասարդներուն, գլուխը կ'երեքնէր՝ երբ անոնցմէ ոմանք կը դժկամակէին իրենց աւանդը դատնալ, եւ յաճախ՝ կաղնեփայտէ մեծ երկթեւեան դրուն մօտը՝ արխնաչազախ մարմիններ կը գտնուէին, մարմիններն այն խիզախներուն որոնք աշտարակներն ի վեր մապլցիլ ուզած էին եւ զոր կարմիր մարդուն սուսերը, անձայն սուսերը զարկած էր :

Գարեր անցան այսպէս : Օր մը, ձորակին մէջ լուր մը տարածուեցաւ, անձանթ էակ մը երեւան էր ելած եւ մէկը չէր պիտէր թէ ուր կից եկած էր : Բարձրահասակ ու զեղեցիկ պատանի մըն էր, զորովոտ ու կորովի անմօրուս դէմքով, պայծառարոց աչքերով, մոգիչ ու գրաւիչ ձայնով : Երկայն գանգուր մազեր ունէր իր առոյգ ու հապուկ մարմինը կը փաթթուէր հուժկու եւ ճապուկ պատմուճանի մը մէջ՝ որ իր մէջքին վրայ սեղմուած էր գօտիով մը : ձեռքը շինուած էր անձանթ փայտէ մը շինուած ցուպով մը : Իրիկունը՝ տուները կը մտնէր, կրակարանին մօտ կը նստէր, կ'ընդունէր կաթը զոր իրեն կը հրամցնէին, եւ երբ իր շուրջը խմբուէին անեցիները, կը խօսէր զմայլելի երկրի մը վրայ զոր անուշահոտ հովեր կը փայփայէին, պարտէզ մը պերճագեղ ծաղիկներով որոնք տաք ու հզօր բուրուփներ

կը ծորին, անուր այգի մը, համեզ ու քաղցր պուրակներով, հասունցած՝ հոյակապ աստղէն, որուն մարմրուկ մէկ ցոլքը միայն ծանօթ էր ձորակին բնակիչներուն:

Նոսնգագին մտիկ կ'ընէին իր խօսքերը: Քիչ ատենէն, այդ բոլոր մտայլ էակները չբաւականացան զայն միայն գիշերը լսելով. անոր ետեւէն գացին թաղապետի մարգերուն մէջէն զոր իր խօսքերը կ'երիտասարգացնէին, եւ մատչելի ժայռերուն վրայէն: Իրենց հետաքրքրութիւնը անյագ էր: չէին կշտանար իրենց հիւրին պատմածներն իմանալէն, եւ օրէ օր այդ հրաշայի աշխարհը ճանչնալու փափաքնին կը մեծնար: Կը հարցնէին թէ ո՛ւր կը գտնուէր այդ բուրումնաւէտ դրախտը, կ'ուզէին երթալ տիրել անոր, եւ վեր կը վերցնէին իրենց տխրած բազուկները, զոր խանդավառութիւնը կ'ուժովցնէր: Պատանին երկայն ատեն դիմադրեց անոնց աղաչանքին: Առտու մը, երբ տեսաւ որ լաւագոյնին սէրը անոնց սիրտը մեծցուցած էր, երբ հասկցաւ թէ ամենայաւին ծարաւը անոնց սիրտը յայնցուցած եւ զօրացուցած էր, երբ զանոնք պատրաստ զգաց գերագոյն աշխարհակալութիւնը փորձելու, անոնց իմացուց թէ իր աւետած Նգեմը կը գտնուէր այդ ժանտ

դղեակին ետեւը, դժնեայ սրահներէն եւ առասպելապէս աշտարակներէն անդին, եւ անոնց յայտնեց թէ երեք պահապան մարդիկն էին որ կ'արգիլէին խաղաղութեան ու հեշտութեան Նգեմին մուտքը:

Այն ատեն ամբոխը ահուելի աղաղակ մ'արձակեց, իր մէջ զգաց սոսկալի ատելութեան մ'եւ անսահման սիրոյ մը բողբոջիլը, ու երջանկութեան բաղձա քով մը աուլցուած, պոռաց դէպ ի լոյսը եւ հրէշաւոր շէնքին վրայ խուժեց: Իր հզօր բաղխումին տակ, վիճեղէն զանգուածները զանգաչեցին, պատերը ճեղքուեցան, աշտարակներուն ատամունքները փլան եւ տհալու դղեակը հիմնայատակ կործանեցաւ: Փլատակներուն շեղջակոյտին տակ՝ երեք տիրող մարդիկը թաղուեցան: ամբոխը արհամարհեց զանոնք, բայց եւ չտեսաւ գեղեցիկ աւետողը որ գետինը փռուած էր, սուսերին վերջին ճիգէն խոցուած: Աւետողը ժըպտեցաւ, ներեց անոնց որ զինքը կը մոռնային, ու մեռաւ՝ երջանիկ՝ որովհետեւ այդ չուտուկան հրոսը, որ զինքը կը կոխտէր, մեծածայն կ'ողջունէր ազատ ու հրաշափայլ արեւը որ իր բոլոր ճառագայթներն հիմա կը պարզէր անոր:

ԳԵՐՆԱՐ ԼԱԶԱՐ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՅԵՐԸ

—

Փարիզի Հայերը. Չարին զրկեցին աղերսագիր մը՝ եկեղեցապատկան կալուածներու վարչութիւնը հայ կղերին ձեռքէն յափշտակող ու քաքաղին յետս կոչուած խնդրելով :

Նմանօրինակ աղերսագիրները զրկած են Սմերիկայի Պարսկաստանի եւ Մանչեսթրի Հայերը :

Հրագիրներէն իմացանք թէ երեք Հայեր, (տաճկահայ) իշխան Կալիցինի վրայ յարձակած եւ փորձած են զայն սպաննել, բայց իր կինը մէկտեղ ըլլալով՝ ինչ ուզած որ էն ալ հարուած մը կրէ, եւ այդ պատճառով չեն յաջողած իրենց նպատակին հասնիլ. վերաւորած են միայն իշխանը, Եագախներ ու զինուորներ վրայ հասնելով՝ սպաննած են երեք Հայերը : — Վերջին պահուն «Օրօր»ի մէջ հրատարակուած հեռագիր մը կը հաղորդէ թէ իշխանին վէրքերը շատ ծանր հանգամանք մը բու-

տացեր են եւ թէ իր կեանքը վաճանգի մէջ է, այդ հեռագիրը զեռ չհաստատուեցաւ սակայն :

Եւրոպական յրագիրները հաղորդեցին, — այդ յարձակումէն իսկ առաջ, — թէ ուս կառավարութիւնը որոշած էր իշխան Կալիցինը հեռացնել, կովկասէն եւ անոր տեղ իրր ընդհանրապէս զրկել հոն զօրավար Քուրտիաթիւնը : Ի՞նչ ալ ըլլայ եկող, — ու կը կարծուի թէ Քուրտիաթիւնը նախարարաց խորհուրդին մէջ Կալիցինի առաջարկած որոշման հայտնակողներէն է եղած, — Կալիցինը, այսինքն տասը տարիէ ի վեր հայ տարրը սխերիմ ու ապուշատելութեամբ մը հալածող եւ կարգ մը հակահայ որոշումներու անձնապէս զրդիչ եղող այդ պաշտօնեան՝ հեռացնելու որոշումը հաճելի ըլլալ մըն է Հայոց համար, եւ յաղթանակ մը :

Պոլսոյ թերթերը կը հաղորդեն թէ Չարը Տարմշղատէն դարձին հրամայած է ներքին գործոց նախարար տը Փլեվէին հեռագրել էջմիածին թէ ընդունած է Հայոց եկեղեցապատկան կալուածներու խնդրոյն մասին զրուած աղերսագիրը զոր կաթողիկոսը զրկած էր իրեն Տարմշղատ դատուած միջոցին :

ԱՄՅՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԳՄԳԵՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ

ՎԵՑԵՐՈՐԳ ՇՐՋԱՆԻՆ

Ա.Ն.Ա.Հ.Ի.Տ պիտի շարունակէ հրատարակուիլ միեւնոյն ուղղութեամբ եւ միեւնոյն ծրագրով, գրական եւ գեղարուեստական բաժինն աւելի ճոխացած :

ԲԱԺԱՆՈՐԳԱԿԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Այն բաժանորդները որ զեռ չեն վճարած իրենց բաժնեգինը, կը խնդրենք որ փութան իրենց պարտքը հատուցանել, իսկ ասկէ յետոյ :

ԳԻՉ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՊԱՐՍԿԵՐԷՆ ԲԵԱԳՐԷՆ

Գ. ՓԱՌՆԱԿ

Այս հատորը պիտի պարունակէ պարսիկ մեծ բանաստեղծին բոլոր քառյակներուն թարգմանութիւնը եւ ընդգրծակ ու հմտալից ուսումնասիրութիւն մը՝ թարգմանչէն՝ Խայեամի կեանքին ու գործին վրայ :

Գինն է .

Վերժէ թղթի վրայ	5 ֆրանք
Կուշի — —	5 —
Հասարակ — —	3 —

Պ. Գ. Փառնակ որոշած է իր այս հատորին վաճառման հասոյթին կէտը հուլիսի 2էյթունի որբերուն համար բացուած հանդանակութեան եւ կէտը Պէշիկթաշլիանի գործերուն հրատարակութեան :

Գինը ուղղութեամբ պէտք է գրին «Անահիտ» խմբագրութեան կամ մեր գործակատարներուն :

POÈMES ARMÉNIENS, ANCIENS ET MODERNES

TRADUI PAR

A. TCHOBAJIAN

ET PRÉCÉDÉS D'UNE ÉTUDE DE

GABRIEL MOUREY

Գինը փափաքողները պէտք է գրին. Librairie A. Charles, 8 Rue Monsieur le Prince, PARIS

ԳԼ 2 ՅԲ.

ԱՂՁՔՏԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդացիին է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) ,
 2 տոլար (Ամերիկա) 5 րուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 5 ֆր. (Ֆրանսա), 6 ֆր. (օտար երկիրներ), 1 տոլ. (Ամերիկա), 3 րպլ. (Ռուսիա) :

Յօրուած եւ բաժանորդացիին զրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆԱՀՏ» ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Դավրէժ . —	» Մկրտում Սահակեան
Նիւ-Նօրք . —	» Պետրոս Գարրիէլեան
Իսթ Ուոթըրթաուն . »	Կ. Մալխասեան
Ուոթըր . —	» Ա. Յովսեփեան
Չիքաիօ . —	» Ա. Քարակալուրեան
Գրսթոն . —	» Արամ Ասքանազ
Փրովիտէնս . —	» Օ. Տիրատուրեան